



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

21187

առարկա թիւն Գ. Գալստեան ի

Ե. Կ. Պ. Բ. Ե. Վ.

ՏԱՏԵԱԿԻՑԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

ԹԱՐԳԱ. Կ. ԶԱԼԱՅԵՎԻ

Թ Ի Յ Լ Ի Ս  
Տարբան Տ. Մ. Ռուսիան Հի  
1905

7745

18.02.2014

21187

330

4-33B  
ան

Հրատարակութիւն Գ. Գալստեանի

15 JAN 2010

Օ 5 Մ Ե Բ Հ Ա Խ

Ն. Կ Ա Ր Լ Ի Պ Ե Ւ Ի Ւ

300

1387-Կ

ՏԱՏԵԱՄԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑՈՒԵՐ

3001  
1933

Տօն 88 հունվարի 2010 թ.



ԹԱՐԳԱ. Կ. ԶԱԼԱԼՅԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Տպարան Տ. Մ. Ռուսինեանցի  
1905

ՕՐՈՎԱԿ 25

0 21500000

Дозволено цензурою. Тифлисъ 28 Июля

ՎՐԱ ՀԱՅ

## ՏՆՏԵՍՈԳԻՏԱՎԱՆ ԶԲՈՅՑՆԵՐ

Ա. Զ Բ Ա Յ Յ

Այս գրքովի մէջ մնաք խօսելու ենք մարդկանց, արդիւնաբերական գործունէութիւնից առաջացող, զանազան տեսակ երեսիթների մասին։ Այդ առթիւ՝ առաջ և առաջ պէտք է որոշակի հասկանալ, թէ մարդուս արդիւնաբերական գործունէութիւնը Բնէ բան է։

1.

Արդիւնաբերուկան գործունէ։ Ամենքիս հասկանալի է, ու թիւն։ որ արդիւնաբերական խօսքը արդիւնաբերել խօսքից է ծագում։ Մարդկիկ արդիւնաբերում են՝ զրամ (փող), հաց, արդիւնաբերում են մի գործ, որ իրանց փող և հաց տար ի՞նչ է անում երկրագործը, երբ սերմ է ցանում։ Նա իր համար արդիւնաբերում է, ձեռք է բերում։ Հաց ի՞նչ է անում արհեստաւորը, երբ մի բան տաշում է, կամ նրան երկաթավ է պատռմ։ Նա կատարում է մի որոշ գործ, որի համար փող է ստանալու, իսկ այդ փողով նա հաց է զնելու, այ-

սլնքն, կրկին իր համար հաց է ձեռք բերում, ինչ է անում վաճառականը իր խանութում առ և տուր անելիս: Նա աշխատում է իր ապրանքը ծախել տւած գնից աւելի գնով, որպէս զի իր ապրանքից օգուտ ստանալ և նրանով իր համար հաց գնէ, այսինքն, նա էլ հաց է ձարում: Ես այսանդ ասում եմ շարունակի, թէ ալդ միջոցներով հաց է արդիւնաբերում: «Հաց» խօսքի տակ մենք պէտք է հասկանանք ամեն ինչ, որ հարկաւոր է մարդուս կեանքը պահպանելու համար: Ալդ պատճառվ, ևս այստեղ ի նկատի ունիմ՝ ոչ միայն ամեն տեսակ կերպարուր, այլ և հազուստ, վառելիք, մի խօսքով ամեն ինչ, առանց որին մարդս չէ կարող ապրել:

2.

Որշումն:

Հիմա հասկանալի է, թէ  
ինչ պէտք է հասկանանք,  
երբ ասում ենք՝ մարդկանց արդիւնաբերական դրծունէութիւն: Ամեն գործունէութիւն, որի նպատակն է՝ արդիւնաբերելոց, ձեռք բերել, ինչ որ մարդուս ապրուստի համար պէտք է, անւանւում է՝ արդիւնաբերական:

3.

Արդիւնաբերական գործունէ- կենդանի մարդը իր ութեան բնական անհրաժեշտ կաղմւածքը պահպանեատութիւնը:  
լու է ձգտում: Եթէ նա նրան չպահպանէր, կաղմւածքը կը սկսէր քանդակել: Եթէ մարդուս բոլորովին չկերպարենք, նա կը մեռնի սովից, ալսինքն: Նրա կաղմւածքը բո-

լորովին կը քալքաւի: Եթէ նրան բնութեան օրէնքների պահանջած չափից պակաս սննդենք, նրա առողջութիւնը կը վատանալ, նրա հիւանդութիւնները կը սկսեն աւելի լաճախ կրկնել, նրա ուժերը կը սպառւին, կաղմւածքը կը քալքաւի, բայց հետ զհետէ: Մարդս լիովին ըմբռնում է ալդ ընդհանուր անքակտելի կանոնը և իր բոլոր ուժով աշխատում է ձեռք բերել իր կեանքի համար բոլոր անհրաժեշտ միջոցները: Ալդ հոգսը միմիայն մարդու բնորոշ լատկութիւնը չէ: Ոչ պակաս աստիճանով ըմբռնում են ալդ բանը և կենդանինները: Նրանցից իւրաքանչիւրը բնազդմամբ աշխատում է, թէ կշտանալ և թէ ցրտից պաշտպանւել: Մարդս, ի հարկէ, նորոն է անում, սակայն նա ալդ զիտակցաբար է անում, նա կշռում է ամենալաւ եղանակները, միջոցները իր նպատակին համենելու համար: Նայեցէք ձեր շուրջը, թափանձեցէք մըտքով ձեզ բոլորող կեանքի խորըը և զուք կը տեսնէք: որ առանց բացառութեան ամենքին բնորոշ է ալդ բնական, անխուսափելի կարիքը, որ մարդկանց ահագին մասը, համարեա, ամրողապէս—ապրում են միայն ալդ հոգսով, իրանց համար մի պատառ հաց ձարելու հոգսով:

4.

Կարիք:

Զանաղան իրեր ձեռք բերելու համար մարդուս զգացած անհրաժեշտութիւնը՝ կարիք է անւանւում: Կարիքները կարող են զանաղան լինել: Իւրաքան-

չիւր մարդ կարիք է անւանում այն բանը, որին նա-  
աւելի է սովոր: Որքան մարդս աւելի չքաւոր է, այն-  
քան նրա կարիքները սակաւաթիւնն և ընդհակառակը,  
որքան նա ունեոր է, այնքան նրա կարիքները շատ  
են, Մինչեւ այժմս նկատւած է, որ աւելի լուսաւորւած  
ազգութիւնների կարիքները աւելի բաղմաթիւնն,  
քան թէ նրանցից պակաս չափով զարգացած ազ-  
գութիւններինը: Ժամանակի հետ զուգընթաց կա-  
րիքների թիւը բաղմացել է և բաղմանում է: Աս-  
կայն, որքան էլ զանազանուին կարիքները այս և  
այն մարդկանց համար և զանազան ժանանակամիջո-  
ցում, կայ մի սահման, որից այն կողմը—նրանք  
չեն կարող պակամել, առանց մեր առողջութեանը  
վնասելու և աշխատելու ընդունակութիւնը քչաց-  
նելու: Այն կարիքները, որոնք այդ սահմանից դուրս  
չեն, անւանում են զլխաւոր, առաջին կարիքներ,

5.

Գլխաւոր կարիքները: Մարդուս կեանքը յարա-  
տելու համար նրա կազմ-  
ածքին անհրաժեշտ են՝ սնունդ և տաքութիւն:  
Թէ մէկի և թէ միւսի համար ծառալում է կիրա-  
կուրը, երկրորդի համար միայն բնակարանը, հագուստը  
և վատելիքը: Հասկանալի է, որ մեր թւած առար-  
կաները կազմում են զլխաւոր կարիքներ և մար-  
դու ամենամեծ հոգսերի նիւթն են կազմում: \*) Զա-

\*) Միս մնացած բոլոր կարիքների համար բանոր  
դասակարդի ընուանիքները ծախսում են՝ գերմանիայում  
իրանց եկամուտների միայն  $4\frac{1}{0}$ -ը, բելջիայում  $7\frac{1}{0}$ -ը, ֆր-  
անսիայում  $17\frac{1}{0}$ -ը:

նազան մարդկանց, զանազան բնակավայրերում և  
զանազան ժամանակ հարկաւոր է և զանազան չա-  
փով կեռակուր: Դա կախւած է շատ և շատ պատ-  
ճառներից: Օրինակ, վերջին կարգից է կլիման:  
Ծոդ երկրներում մարդս բնականաբար սակաւա-  
պէս է, իսկ ցուրտ երկրներում նա աւելի պահանջ-  
ներ ունի: Ուրեմն, հասարակածի գօտու տակ ըն-  
կած երկրներում, մարդ իր սնունդը ձեռք բերելու  
համար, աւելի քիչ է աշխատում, քան թէ միւս  
մնացած երկրներում և մենք, որքան աւելի մօտե-  
նանք բեկոներին, այնքան պէտք է աւելի աշխա-  
տենք մեզ սնունդ ճարելու համար: Յետու դժւար  
չէ հասկանալ, որ կլիման շատ մեծ նշանակութիւն  
ունի՝ հագուստ, բնակարան, վառելիք ձեռք բե-  
րելու կողմից: Ծոդ երկրներում մարդիկ կարող են  
շրջել, համարեա թէ, առանց հազուսի, կարող են  
ապրել հասարակ վրաններում, կարող են, գրէթէ,  
առանց վառելիքի մնալ: Որքան մօտ լինենք բեկո-  
ներին, այնքան աւելի անհրաժեշտ են տաք հա-  
գուստներ, աւելի պէտք են՝ տաք, ամուր և մեծ  
(աւելի շատ օդ պարունակող) բնակարաններ, տար-  
ւան ընթացքում աւելի մեծ չափով վառելիք: Հա-  
սարակածի տակ վայրենի մարդը ամբողջ տարին  
ապրում է առանց հագուստի, վրանի մէջ, բաց  
երկնակամարի տակ, բնենի մօտ էսքիմոսը բոլոր  
տարին վաթաթւում է մուշտակների մէջ և տա-  
քացնում է իր խրձիթը: Պարզ է ուրեմն, որ բո-  
լոր այն աշխատանքը, որ կրում են ալդ կարիք-  
ները լրացնելու համար, բեկոների մօտ և բարե-  
խառն գօտիների տակ ապրողները, շոդ երկրնե-

լում անհետանում է, ալսինքն. աւելորդ է դառնում: Մի ուրիշ ալղպիսի պատճառ ներկալացնում է հասակը. Հասակաւոր մարդը իր կազմւածքին սընունդ տալու համար, աւելի շատ կերակրի է կարուտ, քան թէ երեխան կամ ծերունին: Ուրեմն մարդկանց այն խմբերը, որոնց մէջ հասակաւորների թիւը միւս անդամների թիւց մեծ է, պէտք է սնունդ ձեռք բերելու համար աւելի աշխատեն, քան թէ նրանք, որոնց մէջ հասակաւորները փոքրաթիւ են:

**Ալսպէս ուրեմն.** զիսաւոր կարիքների քանակը որոշում է այն բնական պայմաններով, որոնց տակ ապրում են մարդիկ:

6.

Արդիւնաբերական գործունէու. Հիմա հասկանալի է, որ թիւնը, որպէս կարիքներ լրաց մարդու արդիւնաբերական ցնող միջոց: գործունէութիւն է անւան-

լում այնպիսի աշխատութիւն, որ ուզուած է դէպի նրա նիւթեկան կարիքները լրացնելու, ալսինքն, որ և է առարկալ ձեռք բերելու կողմը և թէ մարդկանց մեծամասնութեան համար միան այս, բնութեան իսկ պահանջած զըլ խաւոր կարիքները, լրացնելու մէջ է բովանդակում:

7.

Տնտեսագիտական գործունէ- Արդիւնաբերական գոր-  
ութիւն ասւած մտքի էու- ծունէութիւնը անւան-  
թիւնը:

տական և մենք ալղպէս էլ անւանելու ենք նրանք

Տ.

Տնտեսագիտական գործունէ- Բոլոր վերել ասածից, ութեան կախումը զանազան գուք տեսնում էք, որ պատժաներից: մարդկանց տնտեսագիտական օրէնքները պատկերացնող դիտութիւնը, շատ ընդարձակ է և չափազանց հետաքրքրելի, նա իմաստասիրում է բոլոր այն աշխատանքը, որ բաւականութիւն է տալիս մարդկանց ամենակարևոր ծգառմներին և որով, համարեա թէ, բոլոր մարդիկ զբազւած են մշտապէս: Ով իր օրական պարենով է զբազւած, և հետաքրքրած, պէտք է հետաքրքրափ նունալիս ծանօթանալու այն կանոնների, այն օրէնքների հետ, որոնց օգնութիւնով նա նրան ձեռք է բերում: Ալդ կանոնները և օրէնքները աբտալալտում են իմիջի ալլոց և նրանով, որ հրքան էլ բազմատեսակ լինի մարդկանց տնտեսագիտական գործունէթիւնը, նա կախումն ունի բազմաթիւ զանազան պայմաններից, որոնցով նա կառավարում է: Օրինակ, նկատած է, որ մարդկանց կարիքների չափը կախւած է ի միջի ալլոց նրանց պարապմունքից և ալդ պարապմոնքի ծանրութիւնից: Ալսպէս, հողկրողը, համարեա, երկու անդամ աւելի կերակուր է սպառում, քան թէ դերձակը մի և նոյն բնական պայմանների տակ: Երբ հող փորողը չէ աշխատում, նա աւելի քիչ է ուտում: Դրանից աւելի մեծ նշանակութիւն ունին բնական պայմանների զանազանութիւնները: Եթէ որ երկիրը հաց չըտար, կամ թէ մարդիկ նրան ստանալու եղանակը

ուրիշի ձեռքի տակ աշխատելու և ալլն։ Մի խսօքով՝  
շրջապատող պալմանները որոշում են մարդկանց  
տնտեսական գործունէութիւնը։ Այդ պալմաններին  
հնազանդում են սոլորնքեան անխտիր և այդ պատ-  
ճառով տնտեսագիտական գործունէութիւնը պա-  
տահական չէ, մեր կամքից չէ կախւած, այլ կախ-  
ւած է որոշ կանոններից և օրէնքներից, որոնց  
կարելի է իմաստասիրել։

## Բ. Զ Ր Ո Յ Յ

14.

Առարկույի բաժանմունքը, Վերև մենք տեղեկա-  
ցանք, որ մարդկանց  
տնտեսագիտական գործունէութիւնը իմաստասիրելը  
չափազանց հետաքրքրական և լիովին կարելի  
դորձ է։ Այդ գործի վրայ խօսելուց առաջ մեզ մը-  
նում է միան ծանօթանալ այն բանի հետ, թէ  
ինչ կարդոլ է կատարւում այդ իմաստասիրութիւնը,  
ինչ մասերի է բաժանելում մեր առարկան։ Մենք  
գիտենք, որ մադկանց տնտեսագիտական գործու-  
նէութիւնը մի ձգտումն ունի՝ ստանալ ամեն ինչ,  
որ բաւականացնում է նրանց կարիքները։ Ի՞նչ-  
պէս է այդ կատարւում կեանքի մէջ։ Ամեն մարդ  
կարող է պատասխանել այդ հարցին, եթէ միտք  
դարձնէ իւրաքանչիւր քայլափոխում իր տեսածք  
վրայ։

12.

Արտաքերութեան էութիւնը։ Սկիզբը մարդու պէտք  
է ձեռք բերէ ամեն ինչ,  
որ ծառալում է այդ նպատակին և սոսցած ի երին  
այնպիսի կերպարանք տայ, որ հնարքաւոր լինի նրան-  
ցով օգտուել։ Պէտք է հացահատիկ ձեռք բերել  
փալտ կարել, երկաթի հանք մշակել սական ոչ  
հացահատիկը, ոչ նոր կարած փալտը և ոչ հանքը  
չեն կարող մարդու պէտք զալ առանց մշակու-  
թեան։ հացահատիկը պէտք է աղալ, ալիւր դար ձ-  
նել փալտը և հանքերը մշակել, ալսինքն։ նրան-  
ցից պատրաստել այնպիսի իրեր, որ պիտանի են  
կեանքի համար։ իրերը ձեռք բերելը և նրանց մը-  
շակելը անւանւում է արտաքերութիւն, նա կազմում  
է մեր առարկակի առաջին մասը, մարդկանց սըն-  
տեսագիտական գործունէութեան հիմքը։ Մինչև  
որ նիւթը չէ արտաքերած, հասկանալի է, որ լի-  
շաւ կարիքներին բաւականութիւն տալը անհնա-  
րին է, յետու։ միան այդ մասով չէ կարող սահ-  
մանափակւել մեր տնտեսագիտական գործունէու-  
թիւնը։ Եթէ որ աշխարհիս երեսին ամեն մարդ  
արդինաքերէր իր համար ամեն ինչ, միան այն  
ժամանակ կարելի կը լինէր ասել, թէ լոկ արտա-  
քերութիւնը իմաստասիրելը բաւական է այդ գործու-  
նութեան հետ ծանօթանալու համար։

13.

Բաշխելու էութիւնը։ Սական, ամեն մի քայ-  
լափոխում դուք կարող  
էք տեսնել, որ օրինակ, մշակը իր համար չէ գոր-

ծում, այլ տիրոջ համար, թէ հողատէրը ինքը չէ  
մշակում հողը, այլ նրան վարձով ուրիշին է տա-  
լիս, թէ մէկը միւսին փոխարինաբար փող է տա-  
լիս և փող ստացողը նրանով կազմակերպում է իր  
տնտեսութիւնը, իր գործարանը, նա նրանցից եկա-  
մուտ է ստանում և փողատիրոջը փողի համար  
տոկոս է վճարում: Այսպէս, մենք տեսնում ենք  
այդ բոլոր դէպքերում, որ ամեն մի առարկայից  
արտաքերութեան համար շատ անդամ մասնակցում  
են մի քանի մարդ ի միասին, նրանցից իրաքան-  
չիրը մասնակցում է, ի հարկէ, այն նողատակով,  
որ դրա փոխարէն զործից ինքն էլ շահւի: Քիչ է  
պատահում, որ մի մարդ իր ամեն պիտուֆները  
ինքը արտաքերէ: Երբ գիւղականը հող ունի, նա-  
այնու ամենալիւ, եթէ հնարաւոր է, մի կտոր հող  
էլ ուրիշից է վարձում: Հարուստը մշակներ է պա-  
հում: Արհեստաւորը, եթէ իր զործարանն ունի,  
համարեա թէ, միշտ բանուորներ է պահում: Ուրիմն-  
արդիւնաբերող առարկանները, հազիւ է պատա-  
հում, որ միան մի մարդու պիտուֆները լրացնեն-  
երկրագործը, վաճառելով իր հացահատիկը, ար-  
հեստաւորը վաճառելով, իր պատրաստած առար-  
կան, պէտք է կամ բանուորին ուօճիկ տան կամ վար-  
ձած հողի համար կապալ տան, կամ վեր առած փո-  
ղի տոկոսը տան: Պարզ է ուրիմն, որ արտաքերած-  
առարկանները բաժանում են այն բոլոր մարդկանց  
մէջ, որոնք մասնակցել են նրա արտաքերելու  
(արդիւնաբերելու) զործում: Այս դէպքում մի և  
նոյնն է, իհարկէ, արտաքերած առարկան է բա-  
ժանում, թէ այն փողը, որ ստացւած է, կամ մին-

չեւ անգամ կը ստացւի նրան վաճառելիս: Տնտե-  
սական գործունէութեան ալդ մասի իմաստասիրու-  
թիւնը կազմում է մեր առարկայի երկրորդ բա-  
ժինը և անւանւում է բաշխումն: Բայց զրանով ևս  
չէ վերջանում մարդկանց տնտեսագիտական դր-  
ծունէութիւնը:

## 14.

Փոխարինութեան էութիւնը: Ես ասել եմ արդէն, որ  
եթէ մարդս ամեն տեղ  
գտնէր՝ ինչ որ իրան պէտք է, այնժամանակ փո-  
խարինութիւն չէր լինի, որ փոխարինութիւնը  
խարինութիւն ունի այն խակ պատճառով, որ իրա-  
գուրծիւր վալրում չէ արտաքերում շատ այնպիսի  
առարկաններ, որոնք պէտք են մարդուա: Օրինակ.  
մի նահանգ ամենից աւելի հացահատիկ է արտա-  
քերում և աւելի, քան թէ պէտք է տեղական բը-  
նակիչներին: Այդ աւելորդ հացահատիկը երկրա-  
գործը վաճառում է առեւրականներին, որանք ու-  
ղացած էն ապրանքը այն տեղերը, ուր նա հաղ-  
ւագիւտ է: Ստացած փողով երկրագործը գնում է  
ինչ որ իրան պէտք է, ի միջի ալլոց նա գնում է  
այն գիւղատնտեսական զործիւնները, առանց ո-  
րոնց նա չէ կարող գործ տեսնել և որ պատրաս-  
տում է նրա համար արհեստաւորը: Վերջինս, իր  
աշխատութեան փոխարէն ստացած փողով, գնում  
է օրինակ փալտեղէն: Եթէ այդ տեղ անտառ չկաէ,  
փալտը բերում են այնտեղից, ուր անտառներ շատ  
փալտը բերում են, որ իրանց երկրում չը-  
կան և փալտը ծախում են, որ իրանց երկրում չը-

դանւող հացահատիկ գնեն, Արհեստաւորը գնում է իր համար նորնպէս և ուրիշ տեղից բերած երկաթ։ Թէ փատը և թէ երկաթը արհեստաւորին միջոց են տալիս նորէն նրանց վաճառել և իր համար ապրուստ ճարել և ալին։ Դժւար չէ հասկանալ, որ ինչպէս առանձին մարդիկ, նոյնպէս և իւրաքանչիւր երկրում նրա բնակիչները վաճառում են ուրիշներին իրանց արդիւնաբերածը, որպէս զի ուրիշներից գնեն այն, ինչ որ իրանք չեն արդիւնաբերում, բայց իրանց պէտք է։ Այսպէս՝ մարդիկ փոխարինում են իրանց աշխատանքի արդիւնքը։ Մեր առարկայի այն մասը, որ իմաստամիրում է անտեսագիտական գործունէութեան ալդ բաժինը անւանւում է փոխարինութիւն։

Սրանք են այն երեք բաժանմունքները, որոնց հետեւում ենք մենք մեր զրուցներում։ Առաջ մենք կը քննենք արդիւնաբերութիւնը, իետոյ բաշխումը և վերջապէս փոխարինութիւնը

## Գ. Զ Պ Ո Յ Ց

15.

Առդիւնաբերութեան երեք պայ- ի՞նչ է պէտք մի որ և  
մանիրը։ է առարկայ արդիւնաբե-  
րելու համար։

Օրինակ. ձեր ուշադրութիւնը դարձրէք լուսամուտի վրայ։ Ի՞նչ է պէտք նրան արդիւնաբերողին, ինչ պէտք է նա անէ ալդ առարկան պատ-

րաստելու համար։ Ամենից առաջ նրան նիւթեղէն է հարկաւոր՝ ապակի, կոճակներ, մեխեր, սոսինն։ Նա չէ կարող լուսամուտ շինել, եթէ չունի ալդ ամեն ինչը, այն նվաթեղէնը, որ նա բնութիւնից է վեր առել։ Սակայն բնութիւնը նրան միայն ալդ չէ տեւը, նթէ շիման ուժը չինէր, մեխը չէր ամրացնի տախտակները իրար, փեղկերի կողպէքը։ չէր փակի նրանց, եթէ տաքութեան ուժը չինէր։ անհրարին կը լինէր երկաթը ծհծել։ Ուրեմն արդիւնաբերողին ամենից առաջ բնութիւնը օգնեց։ Նա նրան տւեց նիւթեր և ուժ։ Ոչ մի արդիւնաբերութիւն չէ կարող զլուխ զալ առանց բնութեան այս պարզեներին։ Այնուհետև բոլորովին պազ է, որ այս բոլոր նիւթերը չին կարող լուսամուտ դառնալ առանց արդիւնաբերողի աշխատանքին։ Մարդու աշխատանքով զակուրւում են, հարթւում են և կապւում են իրար տախտակները, պատրաստում և միւռում են մեխերը, զրւում են ապակիները և ալին։ Վերջապէս, արդիւնաբերողը դատարկ ձեռքերով չէ կարող նիւթեղէնից լուսամուտ պատրաստել։ Նա պէտք է ունենալ կացին, սղոց, ատաղձաղործի գործիքներ, աղամանդ, նրան գործարան էլ է հարկաւոր։ Մի խօսքով. լուսամուտ շինելու համար առաջ նա պէտք է աշխատի ձեռք բերել՝ գործիքներ, մեքենաներ, կացարան և ալին։ Այդ սկզբնական աշխատանքի պտուղն է և անւանւում է զրամակուխի։

Այսպէս ուրեմն արդիւնաբերութիւնը կամ բեւոր են՝ բնութեան պարզեւոր, ամառաւուր կը լուսամուտ գլուխ, թացի ալդ, մենք պիտի ուշ, որ բնութիւնը կամ 7/11.1922



դում է մարդկանց տնտեսագիտական գործունքութեան վրա, ոչ միայն նրանով, որ պարզմում է նիւթեղին և ուժ, ալլ և ուրիշ կերպ (լիշենք, օրինակ, կլիմայի ազդեցութիւնը): Ծանօթանանք ուրեմն արտաքերութեան վրա՝ բնութեան, լեռով աշխատանքի և վերջապէս դրամաղլիի ունեցած ազդեցութեան հետ:

#### 1. ԲՆՈՒԹԻՒՆ

16.

Բնութեան պարզեներով շահ- Խնչպէս ասացինք ար-  
ւելու եղանակը՝ դէն, առանց բնութեան  
պարզեների մարդու չէ կարող շահել իր արդիւնաբերական գործունքութիւնով: Նոր իսկ ես ասի, որ բնութիւնը մատակարարում է մարդուս նիւթ և ուժեր, որոնցով նա օգտում է: Ուրեմն մարդս հպատակացնում է իրանակարող կարող կարող է մարդու համար: Այդ ինչպէս է կատարում: Ի՞նչ ճանապարհով կարող է մարդ հսաղանդեցնել իրան բընութիւնը: Առաջ կարծում էին, որ մարդ հնարում, ստեղծում է նոր նիւթ, որ առանց նրա աշխատանքին չէր կարող գոլութիւն ունենալ: Եռաջ ասում էին, որ եթէ երկրագործը զետին զցեց մի սերմ, իսկ քաղելիս նրա տեղը ստացաւ հինգ սերմ: Նա իր աշխատանքով ստեղծեց չորս հատ նոր սերմ: Սերմը ցանելուց առաջ երկրագործը հողը վարում է: Խնչն համար է նա այդ անում: Նրա համար,

որ նա չէ սերմը կը ծլի միայն այն ժամանակ, երբ նա ենթարկվի տաքութեան և զետնի խոնաւութեան աղղեցութեանը: Հողը պէտք է փափկացնել լատոյ սերմը զետին զցել և նրան հողով ծածկել (տափնել) և միայն այդ ժամանակ նա կը սկսէ ծլել: Այլապէս ասած, մարդու դիտէ, թէ ինչ պարմանների տակ բնութեան օրէնքներով սերմը կարող է աճել, նա տալիս է սերմին այդ պայմանները, իսկ բնութիւնը արդէն ինքն է ծլեցնում սերմին: Յողիւնը մարդու կամքով չէ բուսանում, այլ բնութեան անփոփոխ կանոնների ուժով: Մարդու կարող է միայն գործադրել այդ կանոնները իր հացահատիկը ստանալու համար: Սերմը հաւաքելու ցիւտով նա տեղաւորում է նրան երկու ծանր քարերի արանքը, որովհետև նա գիտէ, որ երբ մի քարը պտուտ գործէ, միւսի վրայ սերմը կը մանրի ծանրութեան ուժից: Մարդու գիտէ, որ հացահատիկը կարող է ուտելու համար պիտանի զառնալ: այդ կերպ մանրեւությունութիւնը նոյնպէս, որ առանց հացի նա չէ կավող ապրել: Այս բոլոր գործողութիւնների մէջ մարդս օգտում է միայն պատրաստի և ոչ թէ իր հնարած բնութեան ուժերով, նա մէկ ուժը դէմ է զնում միւսին և ալրգիսով հարկադրում է նրանց իր օգտին զործել: Յետոյ լայտնի է, որ հողի մասերը ամուր կպած են իրար: Նա գիտէ, որ բութ գործիքով (օրինակ, երկաթէ զաւազանով) այդ կպչողութիւնը չէ կարող քանզել և նա գործադրում է սուր գործիք (զութանի խոփը): Լծկան անասնի կամ չողիի ուժով (շոգիեշարժ գութանով)

նա քանդում է հողի մասերի դութանին շլփ-  
ող զօրութիւնը։ Զրաղացաքարի ճնշման ուժով  
նա չաղթում է սերմի մասերի ընդդիմադրութիւնը,  
Նրան փոշի, ալիւր է դարձնում։ Մարդս գիտէ, որ  
երկրագնդի ձգողութեան ուժով գետի տաշտի վը-  
րացով ջուրը դէպի ցած է հոսում և դէպի վեր նա  
բարձրանալ չէ կարող։ Մարդս բռնում է ջրի ա-  
ռաջը, գետի լայնքին պատճէց է դնում և ջուրը բաց  
է թողնում միայն մի նեղ առևով և նրա՝ վերջում  
ամրացնում է ջրաղացի անիւր։ Դէպի ցած իջնող  
ջրի ուժը զրանից այնքան է սաստկանում, որ ըս-  
կում է անիւր դարձնել։ Մարդս գիտէ, որ պա-  
տին մը մեխ խփելուց չետոյ նա կարող է մեխից  
կախ տալ մի ծանրութիւն և նա կը պահէ նրան՝  
պատի և նրա երեսին խփած մեխի շփման ուժով։  
Երբ մարդ ցանկանում է շինութիւնների համար  
ժիալտեղն ստանալ, նա ոչնչացնում է ծառի մա-  
սերի կպջողութիւնը սուր գործիքով (կացինով) և  
դրանով հարկադրում է ծառին վայր ընկնել՝ հողա-  
գնտի քարշալութեան ուժով։ Դուք տեմնում էք, որ  
այս բոլոր դէպքերում մարդ ոչ ուժ է ստեղծում և  
ոչ նիւթ։ Ծառը, սերմը, գետը, ջրաղացաքարը,  
ձգողութեան և շիման ուժը, մարմի մասերի կաշո-  
ղութիւնը, տաքութիւնը, խոնաւութիւնը, այդ բո-  
լոր կային բնութեան մէջ մարդս աշխարհ գալուց  
առաջ, կան և կը մնան մինչև որ գոյութիւն ու-  
նենայ այն աշխարհը, որի վրա մենք ապրում ենք։  
Դրանցից ոչ մի բան մարդս դեռ չէ ստեղծել։ Բը-  
նութեան ուժերի շնորհիւ եղները և ձիաները, գու-  
թանը քաշելով, երկրագործի համար արտ են պատ-

րաստում։ Բնութեան ուժերի շնորհիւ ջրաղացը  
գործում է, մեխը ծանրութիւն է պահում, ծառը  
կարելի է կարել։ Իսկ Բնչ է անում ինքը մարդը։  
Նա ամենից առաջ իմաստափրում է բնութիւնը։  
Նա գիտութեան և փորձի օգնութիւնով իմանում  
է, թէ ինչպէս կարելի է, վատնելով ամենակարձ  
ժամանակի, ուժ և աշխատանք, բնութեան ուժերը  
իր օգտին շահեցնել, թէ ինչպէս պէտք է մի ուժը  
միւսի գէմ դնելու որ ստացւին իրան պիտանի դորձ  
կամ նիւթ, Եւ իր արդիւնաբերական գործունէու-  
թեան շրջանում՝ կարող է միայն այդ անել բնու-  
թեան վերաբերմար և ոչ ինչ աւելի։ Որքան որ  
մարդ աւելի է զարգացած, որքան որ նա աւելի  
գիտութիւն ունի, այնքան արդիւնաբեր է նրա  
աշխատանքը, այնքան հեշտ է նրան՝ բնութիւնը  
հնաղանդեցնել իրան։

### Պ. Զ Ռ Ա Յ Յ

#### 2. ԱՇԽԱՏԱՆՔ

17.

Աշխատանքի նշանակութիւնը Ալսպէս ուրեմն, բնու-  
մարդկանց արդիւնաբերական թիւնը տալիս է մար-  
դունակութեան մէջ։ Դու նիւթեր և ուժեր։  
Երանցից մարդը պէտք  
է քաղէ ամեն պիտանի բան իր կեանքը պահպա-  
նելու համար։ Ի՞նչպէս է արդ գլուխ բերւում։ — Աշ-  
խատանքով, Քամին անպէտք է մարդու համար՝ մինչեւ

որ քամուաղաց շինելու աշխատանք չգործ դրւի, երկաթէ հանքը—մինչև նրան չմշակեն և նրանից մի բան չպատրաստեն՝ դարրինի կամ փականագործի տշխատանքով, փայտը—մինչև որ հիւսնը կամ ատաղձագործը նրանց վրայ աշխատանք չը դնէն: Համարեա, ամեն ինչ, որ բնութիւնը մատակարարում է մարդու համար, մինչև որոշ չափի աշխատանք չէ գործ դրւած, չէ տալիս նրան այն օգուտը որ կարող է տալ: Մինչև անգամ ջրի երսին լողոցող ձուկը պիտանի է դառնում, երբ նըրան որսալու և նրանից կերակուր պատրաստելու համար աշխատանք է գործ դրւած: Ամենաշքեղ քնութեան զրկում, հասարակածի տակ մարդու ոռվից և ծարաւից կը մեռնէր, եթէ չուզենար բնաւին աշխատել, Ուբեմն, բնութեան պարզեած պիտուքները մարդուս, աշխատանքն է տալիս: Դրէ թէ, ամեն մի օգտաւէտ առարկայ օգտաւէտ է դառնում միայն այն ժամանակ, երբ մէկը աշխատի նրան պատրաստել կամ գոնեա, լարմարցնել մի պիտանի իր գարճնելու համար: Ճշմարիտ է, որ միայն արեի լուս գուացնելու համար, ոչ ոք չէ աշխատում: Դա այն հազւագիւտ պարզեներից մէկն է, որ տրուում է մարդկանց առանց խտրութեան: Սակայն, նրանից էլ որքան կարելի է լրիւ օգտելու համար աշխատանք է պէտք: Օրինակ, որպէս զի նա շահաւէտ դառնալ՝ հացահատիկ դուցնելու համար, պէտք է կանխապէս աշխատանք գործ դնել, հողը վարելու և սերմը ցանելու համար: Ոչ ոք չէ աշխատում, որ գետի մէջ ջուր լինի, սակայն որպէս զի ստացվի նրանից բոլոր այն օգուտը, որ նա կարող է տալ:

պէտք է առաջ աշխատանք գործ դնել՝ հացահատիկ աղալու համար՝ գետի վրայ ջրաղաց շինել, մարդկանց և ծանրութիւններ տեղափոխելու համար՝ շոգենաւ շինել, ձուկ բռնելու համար՝ ձկնորսական ուռկաններ պատրաստել և ալին Զարդացած մարդը հասկանում է մարդկանց համար աշխատանքի ալդ մեծ նշանակութիւնը և խոնարհում է նրա առաջ:

18. ս դասաւ

Խոնարհ նույնաւ և յուրաքանչ չ դիմում որ նույնան Տնտեսագիտական աշխատանք: Սակայն, չէ կարելի առաջ նպատակայարմարութիւնը սել, թէ ամեն մի աշխատանք խատանք մարդկանց անտեսագիտական գործունէութեանն է ֆառագում: Յաճախ կարելի է այնպէս աշխատել, որ աշխատանքը հետեանքը ոչ մի առարկայ չգուացնէ, որ մարդկանց տնտեսագիտական գործունէութեանն նպատակին է ծառայելու: Օրինակ, նակեցէք այն մարդու վրայ որ առանց նպատակի և առանց ծրագրի ըգրուսնելու է գնում: Նա, իհարկէ, նորնպէս աշխատանք է գործ դնում: Նա լարում է իր ջղերը, կարող է շատ լողնել, եթէ նրա զբոսանքը երկար է տեռում: Սակայն նա արդիւնաբերական նպատակն է աշխատում: Ի հարկէ, ոչ: Նակեցէք երեխանի վրայ, որ գնդակ է խաղում, միթէ նա չէ աշխատում: Իհարկէ, աշխատում է և ալդ աշխատանքը շատ օգտաւէտ է նրա առողջութեան համար: Եթէ գուք մարմնամարդութիւն էք անում, դա շատ է օգնում ձեր կազմւածքին կազմուրելու: Սակայն ձեր ալդ աշխատանքը և երեխանի աշխատանքը

չեն դանազանուում այն աշխատանքից, որ կրում է արհեստաւորը իր գործարանում։ Ինարկէ, և շատ են զանազանուում։ Հայության այն ժամանակ է առաջ մասնաւոր պահանջանք բաժն ունեցու առաջ դրան նար 19. աջ մասու վահապատ սննդու ու բարձրացնելու ուղարկու մասնաւոր պահանջանք է հայության Նիւթական կարիքներ լրաց- Ալստեղ աշխատանքին նելը։ հետեւանքը մեղ մի պիտանի առարկալ է ընծալում, որ կարելի է վաճառել և սատրած փողով գնել։ հաց, հագուստ, և առհասարակ ամեն ինչ, որ կարեոր է կեանքի համար, իսկ ակտեղ ոչ մի ալղպիսի բան չէ ստացուում, եթէ որ բոլոր մարդիկ պարագէին միայն մարմնամարզութիւնով, այնժամանակ նրանք իրանց ապրուստի համար չէին ստանալ ոչ մի պիտանի բան, նրանք չէին ճանաչել արդիւնօքերական գործունէութիւն ասւած բանը։ Վերջապէս, կամ մի աշխատանք, որ չէ վերաբերում ալղպիսի գործունէութեան, դա մտաւոր, հոգեկան աշխատութիւնն է։

գ) Նիւթականութիւն։ Եթէ դուք ձեր գործարանում մի դութան կամ մի մեքենայ էք պատրաստել, դուք արդիւնաբերել էք մի նոր առարկալ, որ ծառալիւու է մարդու նոր գործունէութեան համար։ Եթէ դուք մի հին տափան էք կարկատել, դուք գործի համար անպէտք բանը պիտանի էք գարձրել։ Եթէ դուք պատրաստել էք մինչև իսկ մի անպէտք իր, կամ առհասարակ մի աննշան գործիք, որ և է մի խաղալիք, կը գտնուի մարդ, որ գնէ նրան իր երեխաների բա-

ւականութեան համար։ Ալսպէս, դուք պատրաստել էք անպիսի մի առարկալ, որի համար գոնուում է որոշ գործադրութիւն։ Մի խօսքով, ձեր աշխատանքի հետեւանքը գառնում է մի առարկայ, որ օգտակատ է կամ զիւրական է մարդու։ Եւ ալղպէս է լինում ամեն մի աշխատանքի հետեւանքը, ուր մարդըս արտախալտում է իր արդիւնաբերական գործունէութիւնը։ Երկրագործը—մատակարարում է մարդկանց հողի նոր պտուղը, ոստանանկը—տալիս է նրան մահուդ, վաճառականը—տանում է ալդ իրերը այնտեղ, ուր նրանք հազւագիւտ են, ուրեմն աւելացնում է ալղտեղ մարդկանց համար պիտանի իրերի քանակութիւնը։ Սակայն ալդ բանը մենք չենք տեսնում մարդու մտաւոր գործունէութեան մէջ։ Երեխանց դաստիարակող ուսուցիչը, հիւանդներին բժշկող բժիշկը մարդու ոչ մի նոր բան չեն տալիս։ Ուսուցիչը ուսուցանում է նրա համար, որ աշակերտները աւելի զիտութիւն ստանան, բժիշկները բուժում են, որ հիւանդները առողջանանակ ինչու համար են աշխատում երկրագործը, արհեստաւորը ոստանանկը նրա համար, որ իրանց հաց ձեռք բերեն։ Ուսուցիչը, բժշկը ոռօճիկ կամ վարձ են ստանում, որ իրանց կարիքները լրացնեն և պարտաւորւած չինին արդիւնաբերական գործունէութեան դիմելու։ Եթէ որ նրանք իրանց աշխատանքի համար վարձ չստանալին, պարտաւորւած կը լինէին երկրագործութիւնով կամ առհեստով պարապել, ուրեմն ժամանակ չէին ունենալ ուսուցանել կամ բժշկել։ Նրանց լատկացնում են ալդ պաշտօնները ոչ թէ նրա համար, որ նը-

րանց ռոճիկ տան, այլ նրա համար, որ նրանք ուսուցանեն, բժշկութիւնով պարապեն և ոչ մի որիշ գործով չզբաղւեն, Երկրագործը, արենտաւորը, ոսաւինանկը իրանց գործունէութեան մէջ ուրիշ նպատակ չունին, բացի աւպրուստ ճարելը: Արհետաւորը նրա համար չէ շինում գութանը, որ ուրիշներին դրանով օգուտ բերէ, այլ լոկ նրա համար, որ այդ գութանը վաճառելով ինքը շահ ըստանալի: «Միայն հացով չէ ամլում մարդ»: Ուսուցիչ և բժիշկ նոյնքան անհրաժեշտ են մարդկանց, որքան և օրւայ հաց: Մարդկացին հասարակութիւնը չէ կարող ապրել առանց ուսուցիչների: Գիտութիւնը սովորցնում է մարդկանց աւելի լաւ, աւելի արդինաւէտ կերպով գործել, առողջութիւնը պահպանելը նպաստում է՝ աշխատանքի համար աւելի ժամանակ վաստակել: Սակայն այդ մարդկանց բոլոր աշխատանքը չէ մասնում այն գիտութեան մէջ, որ պարապում է միայն արդինաբերական գործունէութիւն իմաստասիրելով: Մեր զրոյցների մէջ մենք շոշոփում ենք միայն վերջինը և խօսելու ենք միայն այն աշխատանքի մասին, որ լոկ նրան է նւիրած:

20.

Տնտեսագիտական աշխատան: Ուրեմն այդ բնապիսի թի որոշումը, աշխատանք է, Առատարութ որոշ նախադով և հասցնէ բանւորին որոշ նպատակի: Այդ պատճառով նա անւանում է նա-

խակշուած աշխատանք: Երբ արհետաւորը սկսում է մի թեղ երնելու մեքենալ շինել նա գիտէ, որ էր նելու մեքենալ է շինում և ոչ մի ուրիշ բան, երկրորդի. Նրա նպատակը պէտք է լինի շինել մի այն պիտի բան, որ բաւականութիւն տալ մարդկանց որ և է կարիքին: Որքան որ այդ կարիքը մօտ լինի զի զիմաւոր անհրաժեշտ կարիքներին, նոյնքան նշանաւոր է, իհարկէ, նրան բաւականութիւն առող աշխատանքը: Վերջապէս, երրորդի: այդ աշխատանքը պէտք է մտաւոր չինի, այլ ֆիզիքական, որ վերջը տալ մեզ որ և է օգտակար կամ դիւրական առարկալ: Այդ աշխատանքը անւանուում է աշխատանք՝ մկանունքի աշխատանք: Ահա աշխատանքի անք երեք յատկութիւնները, որոնցով մենք իմանում ենք, որ նա բաւականացնում է մարդկանց արդիւնաբերական կործունէութեանը: Այդ որպիտութիւնները ունեցող աշխատանքը անւանուում է, տնտեսագիտական, Աւրեմն թիշ է տնտեսագիտական աշխատանքը, Դանախակշուած գիզիքական աշխատանք է, որ բաւականութիւն է տալիս մարդկանց նիթաւոր կարիքներին:

## Ե. Զ Բ Ո Յ Յ

22.

Աշխատանքի գումարը եւ 1. Մարդկանց աշխատանքը միշտ հաւասարաչափ չէ լինում: Ոմանք շատ են աշխատում, ոմանք քիչ: Որոշ ժամանակի գումարը եւ

ցում ոմանք կարողանում աւելի գործել, քան թէ  
ուրիշները: Երեխան չէ կարող այնքան աշխատել,  
որքան հասակաւորը: Ով աշխատանքի մէջ ջանա-  
սէր չէ, նա չէ կարող այնքան գործ տեսնել, որ-  
քան աշխատասէր մարդը: Ով մեքենակի վրայ աշ-  
խատելու հմուտ չէ, կարող չէ այնքան աշխատել:  
որքան հմտութիւն ունեցողը: Վարդենին երբեմն  
ձուկ որսալով է իրան կշացնում և ձկնորսութիւնը  
նրանից շատ ժամանակ չէ խլում, այն ինչ բանուր  
մարդը երբեմն հարկադրած է լինում օրական 15—  
18 ժամ աշխատել իր պարենը ձեռք բերելու հա-  
մար: Յետոյ վալրենի, որսորդը կէսօրից աւելի ժա-  
մանակ է կորցնում, որ իրան կերակուր տւող որս  
ձեռք բերէ, իսկ ալդքան միջոցում դորձարանի մէջ  
զնդասեղներ շինող բանուրը պատրաստում է հա-  
զարաւոր դնդասեղներ և ալին: Ուրիշ խօսքով, մէ-  
կը կարողանում է աւելի լաջողակ, աւելի արդա-  
սաւոր կերպով աշխատել, աւելի մեծ գործ տեսնել,  
ինչպէս ասում են, աւելի արդիւնաբեր է աշխատում  
քան թէ միւսը: Ուրեմն, աշխատանքի գումարը և  
արդիւնաբերութիւնը հասարակութեան մէջ կարող  
են շատ մեծ փոփոխութիւններ կրել: Տեսնենք, թէ  
դա ինչ պայմաններից է կախւած: Ակսենք այն  
զիմանոր պալմանեերից, որոնք աւելացնում են  
կամ պակասացնում են մարդկանց աշխատանքի  
գումարը:

23.

Հասարակութեան մէջ աշխա-  
տանքի զամարը փոփոխող ների է վերաբերում մար-

1. Առս ջինը՝ ի՞նչ պայման-  
տանքի զամարը

պայմաններու): ազգարնա-  
կութեան բաժնումը հասակի դկանց հասակի համա-  
տելու աւելի շատ ըն-  
դունակ, աւելի ամրա-

կազմ, ուժեղ է լինում մարդ 25-ից մինչև 45 տա-  
րին, 15 տարեկան հասակից մինչև 25 ուժերը ա-  
ճում են, սակայն դեռ լիովին զարգացած չեն լի-  
նում: 45 տարուց մինչև 60 ուժերը սկսում են պա-  
կասել, թէպէտ գեռ մարդս անճար չէ: Մինչև 15  
տարին և 60-ից լիտոյ մարդս մշտական աշխատու-  
թեան ընդունակ չէ համարում: Պարզ բան է, որ  
այն հասարակութիւնը, որի մէջ 25-ից մինչև 40  
տարեկան հասակ ունեցողների թիւը 40% է կազ-  
մում, կարող է աշխատանքի աւելի գումար տալ,  
քան թէ այն հասարակութիւնը, որի մէջ նրանց  
քանակը 30% է կամ 20%: Որքան որ հասարա-  
կութեան մէջ՝ երեխանները, պատանիները, ծերու-  
նիները հասակաւորներին համեմատ քիչ լինին, այն-  
քան նա կարող է աւելի աշխատել, այնքան նրա  
կազմակերպութիւնը սննդասագէս աւելի շահաւէտ է:

24.

Բ) Բաժնումը սկսերին նա-  
մածայն:

2. Երկրորդ պարմանը  
պէտք է զնել՝ աշխա-  
տանքը մարդկանց սեռերի  
համաձայն բաժանելը: Կին մարդը տղամարդոց  
տկար է և հետեապէս, տղամարդու չափ չէ կարող  
աշխատել: Այն հասարակութիւնը, որի կազմը այն-  
պէս է, որ, օրինակ, 100 տղամարդին հասնում է

106 կինարմատ, աշխատանքի կողմից այնքան արդիւնակէտ չէ, որքան այն հասարակութիւնը, որի մէջ 100 տղամարդուն համնում է միայն 98 կինարմատ:

25.

գ) Կաղմածքի միջին պիտառութիւնը աշխատանքի վերաբերութիւնը աշխատանքի վերաբերութիւնը է բերմամբ:

3. Իբրև երրորդ պար-

մի ուրիշի աշխատանքի կէս մասը կատարել: Այդ կերպ զանազանութիւն լինում է ոչ միայն ջոկ ջոկ մարդկանց մէջ, այլ մինչեւ անզամ ազգութիւնների մէջ: Նկատւած է, օրինակ, որ զարգացած ազգերը՝ եւրոպացիք աւելի ընդունակ են աշխատութեան մէջ, քան թէ Աւստրիաի վայրենիները: Անգլիացի բանւորը սովորաբար ֆրանսիացուց ուժեղ է քունը տաճկից ուժեղ է: Մարդու մտաւոր զարգացումը ուժեղացնում է նրա մէջ՝ ձգտումն զէպի աշխատանք, իսկ աշխատելու սովորութիւնը զարգացնում է մարդկանց ուժը, որ հետ զհետէ աճում է, անցնելով սերնդից սերունդ: Որքան որ մարդիկ աւելի են զարգացած և որքան որ նրանք աշխատանքը աւելի են լարդում, այնքան աճում է նրանց կաղմածքի պիտառութիւնը աշխատութեան համար, ուրեմն արդպիսի հասարակութեան կազմը տնտեսաբար աւելի շահաբեր է:

26.

դ) Հիւանդութիւն:

4. Հասարակութեան մէջ աշխատանքի քանակութեան չորրորդ պարմանը՝ ազգաբնակութեան հիւանդանականական համար, ուժեղ աշխատանքի վերաբերութիւնը է միայն 98 կինարմատ:

դրսութիւնն է: Մարդիկ որքան աւելի են հիւանդանում, այնքան աւելի է կորչում նրանց աշխատանքի ժամանակը: Որքան որ ազգաբնակութիւնը աւելի առողջ է, այնքան նա կարող է աւելի զործել: Որքան որ մի երկրի մէջ՝ խուլերի, կորբերի, համբերի, խելազարների թիւը քիչ լինի, այնքան նաշշատ աշխատաւորներ կունենալ: Սակայն հասարակութիւնը միայն դրանցով չէ կորցնում իր աշխատանքի զումարը աւելացնող մարդկանց թիւը: Ամեն մարդ ենթակալ է հիւանդութեան: Որքան լաւ լինի նրա բնակարանը, կերակուրը, հագուստը, որքան նա քիչ աշխատի իր ուժից զուրս, այնքան նա քիչ կը հիւանդանալ: Որքան նա վատ է ապրում, ուտում, խմում, հագնում, որքան վատ է նրա չնչած օդը, որքան նա յաճախ ուժից զուրս է աշխատում, այնքան նա աւելի շուտ է հիւանդանում և այնքան աւելի աշխատանքի ժամանակ է կորցնում: Վատ մնադից, վատ բնակարանից ն օդից մարդու կազմածքը չէ կարող այնքան զարգանալ: Որքան յաջող ապրուստ ունենալիս: Յետոյ պէտք է զիտնալ որ, որ հասարակ, ինչպիսի պարմաններ ել լինին, հիւանդութիւնը կապւած է հասակի հետ: Ամենքից քիչ հիւանդանում է հասակաւոր մարդը, որ ունի 30-ից մինչեւ 40 տարի, 25 տարեկան հասակից մինչեւ 30 և 40-ից մինչեւ 45 տարելի յաճախ են հիւանդանում, իսկ երեխաները և ծերունիները ել աւելի: Ամենքից աւելի հիւանդանում են երեխաները: Պարզ է, որ այստեղ մենք հանգիպում ենք մեր առաջին պարմանին և նորէն կարող ենք կրկնել, որքան հասա-

րակութեան մէջ հասակաւորների թիւը շատ լինի,  
(համեմատած միւս հասակների հետ) և լեռով, որքան  
քաղմաթիւ լինին 30—40 տարեկաններ, այնքան  
ալդ հասարակութեան կազմը տնտեսաբար աւելի  
շահաւէտ կը լինի.

27.

ա) Ազդիւնաէտ աշխատաւոր- 5. Սէնուհետև շատ պարզ  
ների թիւը: է, որ տնտեսաբար աշ-  
խատանքի արդիւնքը առ-  
ձում է այն երկրում, ուր աւելի շատ է արդիւ-  
նաբեր գործունեանների թիւը: Այն երկրը, ուր  
100 բնակչին ընկնում է, դիցուք. 90 երկրագործ,  
արհեստաւոր և առհասարակ արդիւնաւոր աշխա-  
տաւորներ, աղջաբնակութեան կողմից աւելի լաջող  
տնտեսագիտական կազմ ունի, քան թէ այն եր-  
կիրը, որի մէջ նրանց թիւը հասնում է, ասենք.  
75 ի: Ես ասացի արդէն, որ հասարակութիւնը չէ  
կարող ապրել առանց այնպիսի մարդկանց, որոնք  
պարապում են մտաւոր աշխատանքով: Սակայն,  
որքան նրանք շատ լինին, այնքան կը քչանայ  
ալդ հասարակութեան մէջ տնտեսական աշխատան-  
քը, որա հետ կից կամի աշխատանքի շափը ալն-  
տեղ, ուր երեխաններն էլ են մասնակցում հասա-  
կաւորների աշխատութեանը: Երեխաններին վնա-  
սակար է աշխատել գործարանների մէջ, նրանց  
կազմածքը չէ դիմանում երկար աշխատանքի, վատ  
օդի մէջ, բաղմաթիւ բանւորների շրջանում: Հա-  
մարեա թէ, այս պատճառով բոլոր երկրներում

արդելում են երեխաններին աշխատել գործարան-  
ների մէջ, Բայց նրանց աշխատանքը տան մէջ,  
ընտանիքի շրջանում այնքան լոգնեցնող և վնա-  
սակար չէ կարող լինել: Ահա ինչու, որքան որ մի  
երկրում աւելի շատ են՝ տնտեսական արհեստանոց-  
ներ, տնտեսական աշխատանք, փոխանակ մնեց գոր-  
ծարանների և արհեստաոցների, այնքան աւելի  
կարող է աճել նրա մէջ աշխատանքի արդիւնքը:

28.

Տօն օրեր: 6. Վերջապէս, որքան  
որ երկրի մէջ տօն օրե-  
րի թիւը շատ լինի, այնքան աւելի կը պակասի  
աշխատանքի արդիւնքը: Կան տեղեր (Գերմանիան)  
ուր գեռ մօտ ժամանակներս տօնում էին տարին  
200 օրից աւելի, ուր ուրեմն բանում էին տարւալ  
 $\frac{1}{3}$  մասից մի փոքր աւելի: Ուուսիալի մի քանի  
մասերում կարելի է հաշել տարեկան մօտ 130  
տօն օր, կամ մօտաւորապէս աշխատում են տարւալ  
 $\frac{2}{3}$  մասը: Տօնում են շատ անգամ այնպիսի տօներ,  
որոնք չեն ընդունւած եկեղեցու կանոններով, ո-  
րոնք ուղղակի տգիտութեան և սնապաշտութեան  
հետեանք են: \*) Ակդպիսի տօներին անգործ անց-  
կացրած ժամանակը կարձանում է, երբ մարդիկ  
աւելի զարգացած են լինում և իրանց օգտի մա-  
սին ուղիղ հասկացողութիւն ունին:

\*) Օրինակ, Հայոց մէջ՝ «Թռայ տօն, «Թալալոց»,  
«Հաւկուր» և այլ տօներ»

Ընդհանրապէս, որքան աւելի է տարածւում երկրի մէջ, գիտութիւնը և ղարգացումը, այնքան աւելի սկսում են լարգել աշխատանքը և աւելի է աճում հասարակութեան մէջ աշխատանքի արդիւնքը:

## Զ. Զ Բ Ա Յ

29.

Աշխատանքի արդիւնքը, Մենք ծանօթացանք այն պայմանների հետ, որոնցից կախած է աշխատանքի գումարը (արդիւնքը): Անցնենք այն պայմաններին, որոնցից կախած է նրա որակութիւնը: Տեսնում ենք, որ մի մարդ մի և նոյն ժամանակամիջոցում աւելի է զործ տեսնում և աւելի լաւ, քան թէ մի ուրիշը: Պէտք է ասել բոլորից առաջ, որ ալդ պայմանները բազմաթիւ են և նրանց ամբողջովին իմաստափելու ոչ մի հնար չկալ: Քիչ պայմաններ կան կնանքի մէջ, որ ազդում են մարդու լաւ կամ վատ աշխատելու վրայ: Ամեն մարդ տեսել է ալդ իր շուրջը և թերևս ինքն էլ է փորձել: Մի և նոյն մարդը պսօր լաւ է զործում, վաղը վատ: Մենք կարող ենք ծանօթանալ միայն մի քանի ընդհանուր պայմանների հետ, որոնք ազդեցութիւն ունին ամենքի վրայ հաւասարապէս և օգնում են աշխատանքի արդիւնքերութեան աւելանալուն:

30.

Սրդիւնաբերութեան պայմաններից ները, աշխատանքի բաժանումը:

Ազգականի պայմաններից առաջինը պէտք է համարել՝ աշխատանքի բաժանումը: Իուք գուցէ տեսել էք երբ և իցէ, թէ ինչպէս են պատ շարողները, շինութեան համար պատրաստած աղիւսը, վերեւ բարձրացնում մի չարկից միւսը: Շատ անգամ մի քանի աղիւս ձեռքերի կամ պատզարակի վրայ վերև կրկելու տեղ, մշակները կանգնում են շարքով սանդուղքների վրայ և աղիւսները ներքեցից վերեւ ձեռքէ ձեռք են տալիս: Աւս միջոցը աւելի յարմար է, որովհետև պահանջում է աւելի կարճ ժամանակ: Գնդասեղների գործարանում առաջ ամեն մի գնդասեղ սկզբից մինչև վերջը մի բանւոր չէր պատրաստում, այլ շատերը միասին (մօտ 20 հոգի), նրանցից ամեն մէկը գնդասեղի միայն մի մասն էր պատրաստում: Մէկը մնտաղաթելն էր քաշում, միւսը նրան ուզզում էր, երբորդը՝ կտրատում, չորրորդը՝ ծայրերն էր սրում, հինգերորդը՝ գնդասեղի գլուխն էր կոկում և ալն: Գնդասեղի գլուխներ պատրաստելու համար աշխատում էին երկու, երեք արհեստաւոր: Նոյնը և խաղաթուղթ պատրաստելու մէջ, նրա վրայ աշխատում էին 70 առանձին մասնագէտներ: Գործարանների մէջ մեքենաներով մեծաքանակ գործ կատարելիս, իւրաքանչյիւր բանւոր կատարում է ընդհանուր աշխատանքի միայն մի փոքրիկ մասը և երբէք մի ամբողջ բան մէնակ չէ դլուխ բերում: Ինչո՞ւ են աշ-

խատանքը ալդ կերպ բաժանում մի քանի անձանց մէջ: Օրինակ. ինչու գնդասեղը կամ խաղաթուղթը միայն մի բանուր չէ պատրաստում: Ալդ այն պատճառով, որ աշխատանքի բաժանումը չափաղանց աւելացնում է նրա արդիւնքը: Մտածեցէք, թէ մի մարդ քանի գնդասեղ կարող է պատրաստել մի օրում: Ասում են նա հաղիւ կարող է պատրաստել մի հատ և ամենայն զէպս քսան գնդասեղ շինել չէ կարող, սակայն մի փոքրիկ դործարանում, որ չունէր նորագոյն մեքենաներ, աշխատանքը բաժանելիս, 10 բանուր պատրաստում էին մի օրում 48,000 գնդասեղից աւելի: Ասում են, եթէ խաղաթուղթը մի բանուր պատրաստէ, նա չի կարողանալ օրական երկու հատից աւելի պատրաստել, իսկ խաղաթուղթի դործարանում 30 բանուր պատրաստում են մի օրում 15,500 խաղաթուղթ, որ ասել է: ամեն մէկին հասնում է 500 խաղաթուղթ: Կեանքի մէջ ամեն մարդ կարող է նոյնը տեսնէլ: Այստեղ, ուր մի գործի վրալ միասին շատ մարդ է աշխատում գործը աւելի արդիւնաւէտ է լինում: Եթէ կու շուն ի միասին աւելի շատ նապաստակ կը բռնեն, քան թէ չորսը ջոկ ջոկ: (անդիլական առածք):

31.

Այդիսի յաջողութիւնը ի՞նչ ինչից է առաջանում աշպատմառից է առաջանում: խատութեան արդիւնքի ալդ ահազին անումը, նըր բաժանելիս: Առաջինը՝ եթէ մարդ չէ ընդհա-

տում իր մկսած գործը, չէ վորխում նրան, նա շատ ժամանակ է շահում, որ կը կորչէր, եթէ նա մի գործից միւսին անցնէր: Եթէ բանուրը օրւայ մի մասը աշխատէ դաշտում, իսկ միւս մասը ուստայնի վրայ և շարունակ փոփոխէ ալդ պարապբռնքները, նա ոչ միայն իր ժամանակը կը վատնէ դաշտից արհեստանոց գնալու և ախտեղից վերադառնալու մէջ, այլ և կը կորչի նրա ժամանակը, մի գործից միւսը անցնելիս, նրան լարմարելու միջոցին: Եթէ բանուրը սկսէր օրւայ մէջ մի քանի անգամ փոխել իր զբաղմունքը մի քանի գործարաններում, նա առաջւանից աւելի քիչ վաստակ կունենար: Եթէ կորորդը, աշխատանքի բաժանութեան ժամանակ արհեստաւորի ճարպիկութիւնը չափագանց զարգանում է: Հասկանալի է, որ ով մշտապէս կատարում է բազմատեսակ գործ, չէ կարող կատարել ալդ գործերը այնքան, ճշտութիւնով, արագութիւնով, որքան նա, որ իր ամբողջ կեանքում կատարում է միայն մի պարզ գործ: Որքան էլ մարդ լաւ փականագործ լինի, անշուշտ, նա չէ կարող այնքան հմտութիւնով զնդասեղի զիներ պատրաստել, որքան նա, որ տասնաւոր տարիներ, և ամեն օր աւելի ոչինչ չէ անում, բացի ալդ զիներ շինելը: Որքան էլ դարբինը հմուտ լինի, նա չէ կարող մի օրւայ մէջ պատրաստել, օրինակ, 200 300 մեխի: Եթորդը, աշխատանքի բաժանութիւնը օդնում է՝ հնարագէտ լինել, բարեփոխել մեքենաներ և գործիքներ: հասկանալի է, որ եթէ մարդ միշտ, իր ամբողջ կեանքը ունի իր ձեռքին մի և նոյն գործիքը կամ մեքենան, աւելի ընդունակ կը

Աինի մոտածելու, թէ ինչպէս կարող է նրան իր գործին յարմարացնել, քան թէ նա, ով երբեմն է միայն գործիքը ձեռքն առնում. Շատ հնարագիտութիւն ցուց են տւել արհեստաւորները յատկապէս այն պատճառով, որ նրանք մշտապէս և երկարատեւ պատրաստել են մի և նոյն բանը, մի և նոյն գործիքով, կամ գործ են ունեցել մշտապէս որ և է մեքենալի մի որոշ մասի հետ:

Սակայն հարկաւոր է մատնանիշ անել և այն, որ չնախելով այդ բոլոր յաջողութիւններին, աշխատանքի բաժանումը ունի և մի շատ վնասաբեր կողմ։ Երեսակալենք մեզ մի արհեստաւոր, որ իր համար մասնագիտութիւն է դարձրել մի որ և է գործի փոքր մասը։ Օրինակ, ասենք, նա զիսէ միայն գնդասեղի համար մետաղաթել քաշել, քաշում է նրան ամեն օր, 12 ժամ շարունակ և քաշում է իր ամբողջ կեանքը։ Նա Բնչ դրութիւն կունենար նա չէ կարող սովորել ոչ մի այլ բան, որովհետեւ նրա բոլոր ժամանակը այդ գործն է խըլում։ Նրան հարկաւոր էլ չէ նոր բան ուսանելի որովհետեւ նրա վաստակը մի այլ մասնաւոր աշխատանքից, ասենք, օրինակ, գնդասեղի զուխներ շինելիս, շատ քիչ, կամ բնաւ չէ զանազանւում այժմեանից։ Ուրին նրա զիտութիւնը չէ կարող ընդլայնանալ։ Ընդհակառակը, եթէ, նա մինչեւ անդամ զիտութիւն էլ ունենալի, հարկադրւած է չքացնել նրան այդ մշտական, յարատե, անփոփոխ, սեղ, փոքրիկ գործի մէջ։ Ալդպիսի պատմաների տակ արհեստաւորի համար առաջընթացութիւն չկալ, նա ըթանում է, դառնում է այն

մեքենալի մասը, որին նա մեխւած է, որի զործողութեան վրա նա պէտք է անդուլ հսկէ։ Ալդ դեռ քիչ է, նրա շարժմունքների լիովին միանմանութեան պատճառով, նրա ոսկորները, մկանները շատ անզամ, մի ժամանակից իւսով ենթարկւում են ցաւագարութեան։ Օրինակ ամենքը զիտեն, որ մշտական նստկան, ծալապատիկ աշխատանքը ուտքերին մի տեսակ ծուռթիւն է պատճառում, (ինչպէս ալդ նկատում է զերձիկների մէջ)։ Ալդ կերպ բազմատեսակ փոփոխութիւններ պատահում են զործարանների բանւորների մէջ, Վերջապէս, հասկանալի է, որ ալդպիսի բանւորի վաստակն էլ չէ կարող աւելանալ, որովհետեւ նա մշտապէս մեխւած է մի և նոյն գործին։ Այս պատճառով պէտք է ենթարկել, որ աշխատանքի ալդպիսի բաժանումը, ամսինքն այնալիսի զործը, որի մէջ բանւորը մի ամբողջ առարկայ չէ պատրաստում այլ միան նրա մի մասը, թէպէտ և աւելացնում է հասարակութեան մէջ աշխատանքի արդիւնաւէտութիւնը, սակայն չափազանց վնասակար ազդեցութիւն ունի բանւորների վրա! (2)

## 32.

Աշխատանքի գործակցութիւն։ Նորինպիսի ազդեցութիւն 1) հասարակ զործակցու է գործում աշխատանթիւն։ Քի վրա արդիւնաւէտութեան կողմից զործակցութիւնը, որ լինում է հասարակ և բարդ։ Հասարակ գործակցութիւնը, որ լինում է հասարակ և բարդ։ Հասարակ գործակցութիւնը, միջոցին, ինչպէս և աշխա-

տանքի բաժանութեան ժամանակի, մի առարկան պատրաստում են միախումբ շատ բանուորներ, ան ինչ բաժանութեան ժամանակ, ամեն մի բանուոր աշխատում է առարկալի միայն մի մասի վրաւ Հասարակ գործակցութեան ժամանակ շատ մարդիկ միանում են, գործակից են դառնում, որ բոլոր գործը միախումբ վլուխ բերեն, Ալդ կատարում է կամ այն պատճառով, որ գործը վերջացնելու ժամանակ է նշանակւած, (հացահատիկը գետին է թափում, եթէ ժամանակին նրան չքաղեն)։ Կամ այն պատճառով, որ գործը մի մարդու ուժից բարձր է (մեծ ծանրութիւն բարձրացնել), Խմբովի ուժը, շատերի ուժը, լազմում է ալն արդելքին, որին չէ կարող լազմել մի մարդ։ Ակումբը՝ մեծ մարդ է (մալառուսական առած է)։ Ալդպիսի գործի վրա մի մշակը, որքան էլ ճգնի, նրա աշխատանքը առանց ուրիշների օգնութեան քիչ արդիւնք կը տալ։

33.

2) Բարդ գործակցութիւն, Վերջապէս, բարդ գործակցութիւն է անւանում բոլոր մարդկանց աշխատանքի գումարը՝ իւրաքանչիւրինը իր գործում։ Ամեն մէկը պատրաստում է մի ամբողջ առարկա սկզբից մինչև վերջը։ Դարբինը՝ սալ է շինում, երկրագործը հող է վարում։ Դարբինը վաճառում է երկրագործին՝ նրան հարկաւոր սալը, երկրագործը վաճառում է դարբինին՝ նրան հարկաւոր հացը։ Մինչև ալժմ մարդկութիւնը

ձգտում է ալնպէս ապրել, որ իւրաքանչիւր մարդ ամեն ինչ ինքը չպատրաստէ։ Ամեն մարդ մի բան է պատրաստում երկրագործը հացահատիկ, դարբինը՝ գութաններ, դերձիկը՝ հագուստ, մավածառը՝ միս, ոստականներ՝ մահուդ։ Նրանք բոլորեքեան փոխանակում են իրար հետ իրանց պատրաստածը։ Իւրաքանչիւրը պատրաստում է իր կարիքից աւելի, որպէս զի աւելորդը տայ ում այդ պէտք է, և ստացած փողով գնէ, ինչ որ իրան է պէտք, Քաղաքներում պարագում են արհեստներով։ Գլուղերում՝ երկրագործութիւնով, ուր կան հանքեր՝ հանքագործութիւնով, ուր կան անտառներ՝ փայտախներով։ Ալդն է Զբաղմունքները ալդ կերպ բաժանելով կամ աշխատութեան մէջ բարդ գործակցութիւնով։ Մարդիկ ստանում են ամեն ինչ, որ բաւականացնում է, թէ իրանց և թէ ուրիշների կարիքները, Պարզ է, որ բարդ գործակցութիւնը չէ կարող ունենալ բանուրի համար այն վնասակար հետեանքը, որ մենք տեսանք, աշխատանքը բաժանելու մէջ։ Ալդ ճանապարհով ամեն մարդ միջոց է ստանում լաւացնել իր գործը, կատարելագործել նրա մէջ և աշխատել՝ աւելի լաւ, աւելի ճարպիկութիւնով, աւելի շատ, աւելի արդինաւէտ կերպով։

Ե. Զ Ր Ո Յ Ց

Ալսպէս ուրիմի, մենք տեսանք, որ աշխատանքի արդինաւէտութեան առաջին պալմանն է,

Նրա մէջ տեղի ունեցող բաժանութիւնը և զործուցութիւնը, Անցնենք նրա երկրորդ պալմանին՝ աշխատանքի ազատութեամբ:

34.

թ) Աշխատանքի ազատութիւնը: Ամենքիս լաւանի է, որ ծեծու քաշի, հարկադրութեան տակ՝ աշխատանքը անպէտք է: Միան նա ող համոզւած է, որ իր աշխատանքից ծագած օգուտը ինքն է ստանալու, միան նա լաւ է աշխատում: Խոկ եթէ նրա աշխատանքի օգուտը որիշն է ստանում, այն ժամանակ ալզպիսի մշակի աշխատանքից մեծ բան չի ստացիլ, նա քիչ աղջիւնք կունենայ, Աղջկէս է խիստապէս զերիների և ստրուկների աշխատանքը: Առաջւան ժամանակները ամեն տեղ կաէին զերիներ և ստրուկներ, իսկ ազատ մշակներ շատ քիչ էին: Գերին համարւում էր մի իր և ոչ մարդ: Նրա բոլոր գոլքը պատկանում էր իր տիրոջը: Տէրը իրաւունք ունէր նըրան սպանել, ծախել: Ստրուկը մեխանած էր տիրոջ հողին, նա չէր կարող հեռանալ այդտեղից և պարտաւոր էր աշխատել տիրոջ համար: Գիտութիւն և լուսաւորութիւն տարածելու հետ է միասին թէ զերութիւնը և թէ ստրուկները հետ զհետէ ոչնչացան բոլոր երկրներում և այժմս Եւրոպայում ոչ մի տեղ չկան և մնացել են Աֆրիկայում, տեղ տեղ Ամերիկայում, սակայն եւրոպացիք աշխատում են, որ մարդիկ ամենուրեք ազատ լինին: Գերիների և ստրուկների աշխատանքը անհնար է արդիւնա-

աէտութեան կողմից համեմատել ազատ մարդկանց աշխատանքի հետ: Իրաւ, ինչ կարիք ունին նրանք աշխատանքի մէջ մեծ ճիք թափելու, եթէ լաւանալու չէ, որ զրանով իրանց դրութիւնը լաւանալու չէ, որ նրանք իրանց աշխատանքից ոչ ինչ չեն ստանալու: Անհնար է թուլ տալ, որ ալզպիսի պալմանների տակ, մշակը որքան և իցէ եռանդ գործ գնէ: Կարող է պատահել, որ երբ նրանց ծեծ ու զանակութիւն է սպառնում՝ սկսեն աշխատել, բայց դա երկար չի տեի և պատժի վասնդը անհետանառ պէս, կանցնի և աշխատելու եռանդը: Հաշւած է որ գերին դորձադրում է աշխատանքի վրայ կէսից պակաս ջանք, քան թէ նա կարող էր դորձադրել, եթէ ցանկանար: Ջանացել են հաշել, (Յամեմատելով մշակներուն պահելու ծախսը ստածւած արդիւնքի գնի հետ), որ հողատիրոջը Յ կոպէկ արժէր ստուրկների ծեռքով հնձել անքան խոտ, որքան աղատ աշխատաւորների ծեռքով կարժենար: կոպէկ Երկու ազատ հնձւորներ կարողեն են այնքան հնձել որքան միաժամանակ աղատութիւնից զուրկ վեց ստրուկ: Աշխատանքի ալղ թուլ արդիւնաւէտութիւնը վաղուցւանից լայտնի էր գերիների և ստրուկների տէրմերին: Եղել են դէպքերը որ զերիների տէրմերը լանձնել են մի քանի աւելի շուտափութ դորձեր վարձկան, աղատ մշակներին և ոչ թէ իրանց ստրուկներին Մի քանի երկրներում հողատէրերը իրանք էին բարեփոխում գերիների դրութիւնը, տալիս էին նրանց աշխատանքից ստացած արդիւնքի մի մասը և դրանով քաջողում էր զերիների և ստրուկների աշխատանքը

արդիւնաւէտ դարձնել, որով իրանք էլ աւելի էին  
շահւում:

35.

Պ) Աշխատանքին պատկանող Աշխատանքի արդիւնա-  
միջոցներ: Եշտոթեան երրորդ պար-  
մանն է, որ աշխատու-  
թեան միջոցները պատկանին աշխատաւորին: Այդ  
բնչ աշխատանքի միջոցներ են: Աշխատանքի մի-  
ջոց՝ գործի՝ անւանում են առնասարակ ամեն ինչ,  
որ օգնում է աշխատանքին, առանց որին աշ-  
խատանքը զլուխ գալ չէ կարող: Այդ իմաս-  
տով միջոց է անւանում՝ ոչ միայն մեքինան, գոր-  
ծիքը, և շինութիւնը, առանց որին աշխատաւորը  
չէ կարող ապրել այլ հողը, որ պէտք է երկրագոր-  
ծին: Բանուրը իր համար աւելի, լաւ է աշխատում,  
քան թէ ուրիշի համար: Որքան աշխատանքից նա  
աւելի օգուտ ստանայ, այնքան աւելի ուժ ու ջանք  
կը գործ դնէ՝ աշխատանքը արագիւնաւէտ դարձ-  
նելու համար: Այս պատճառով մի որ և է երկրում  
աշխատանքի արդիւնքը այնքան աւելի կը լինի,  
որքան գործիները իրանց, աշխատաւորներին պատ-  
կանին: Նա, ում պատկանում է գետինը, փալիա-  
տում է նրան, վարելով շատ ուժասպառ չէ անում,  
այնպէս ինչպէս նա, ով պայտ հողը կապալով է վերցնում:  
Հողի ափրոջը յարտնի է, որ հողի ուժը պահպանելով,  
նա նրանից ապագալում մեծ շահ կտանայ, բայց  
նա, ով վարձով է վեր առնում այդ հողը, միան  
իր օգուտն է որոնում: Նթէ նա հողը երկար մի-  
ջոցով է վեր առել, նա պահպանում է նրան մին-

չեւ որ մօտենալ ալդ հողը տիրոջը վերագարձնելու  
ժամանակը: իսկ ով կարճ ժամանակով է վեր ա-  
ռել, մինչև անդամ այդ էլ անելու կարիք չունի:  
նա կաշխատի քաղել իր համար ամենամեծ օգուտը  
չնայելով թէ ապագալում հողը կըտակ նոյն օգուտը  
թէ ոչ: Նոյնպէս էլ գործի տիրոջից ուռիկ ստա-  
ցող մշակը, երբէք չի գործադրի իր բոլոր ուժերը:  
չէ որ զրանից նրա ոռնիկը չի աւելանալ: Միան  
ինքը գործի տէրը, երբ բոլոր արդիւնքը ինքն է  
ստանալու, կաշխատի ամենաեռանդուն կերպով:

36.

Պ) Գիտութեան զարգացումը: Վերջապէս լիշենք աշ-  
խատանքի արդիւնաւէտու-  
թեան չորրորդ՝ ամենազլիսաւոր պականը՝ երկրի մէջ  
գիտութեան զարգացումը: Նա ասացի արդէն, որ բնու-  
թիւնը տալիս է ուժեր, որոնցով օգտառում է մարզս իր  
արդիւնաբերական գործունելութեան մէջ: Մարդուս  
բնութիւնը իրան հպատակացնելու գործը իսկապէս  
կայանում է նրանում, որ նա ալդ ուժերը այնպէս է  
իրար գէմ դնում, որ նրանք իր նպատակներին ծա-  
ռալեն: Հասկանալի է, որ որքան շատ մարդիկ բը-  
նութիւնը հնազանդեցնեն իրանց, որքան լաջող կե-  
րպով հարկադրեն բնութեան ուժերին իրանց լաւ  
ծառափել, այնքան աշխատանք կը մնալ իրանց կատա-  
րելու կամ, որ մի և նոյնն է մի և նոյն չափի աշխատ-  
անքով կարող կը լինին աւելի շատ գործել, աւսինքն,  
այնքան էլ աշխատանքը աւելի արդիւնաւէտ կը  
մնի: Ուրեմն աշխատանքի արդիւնաւէտութեան հա-

մար պէտք է բնութեան օրէնքները գլտնալ: Միայն  
ախժամանակ, երբ մեն զիտենք, ծանօթ ենք բնուա-  
թեանը, զիտենք նրա ուժերը, այն օրէնքները, ո-  
րոնցից նրանք կախւած են, միայն այն ժամանակ  
մենք կարող ենք աւելի շահաւէտ կերպով հնադան-  
դեցնել նրաց, հարկադրել նրանց՝ մեր օգտին աշխա-  
տել և մի և նոյն չափի աշխատանքով աւելի մեծ  
արդիւնք ստանալ: Շատ ժամանակ առաջ, երբ  
մարդիկ չգիտէին, թէ ինչպէս պէտք է ջրաղաց և  
հողմաղաց շինել, նրանք մեծ աշխատանք էին գործ  
դնում հացահատիկը ալիւր դարձնելու համար: Արդ  
կողմից՝ ջրի ու քամու ուժերի հետ ծանօթանալը  
անհամար օգուտներ պարզեց մարդուս: Ո՞րքան  
համեմատարար շատ ժամանակ էին կորցնում մար-  
դիկ ծանրութիւնները տեղափոխելու համար, երբ  
դեռ անծանօթ էին չոգիի ուժին, չզիտէին երկա-  
թուղիներ և շղգենաւեր շինել: Միթէ բնութեան  
ուժերը չէին, որ այս բոլոր գէպերում օգնեցին  
աշխատանքը և ժամանակը կրճատել, նաև կցէք ձեր  
շուրջը: Ամեն մի նոր գութան, նոր տափան, նոր  
գործիքը որ ժամանակի ընթացքում տնտեսութեան  
կամ արհեստների մէջ կարեոր են դառնում: գի-  
տութիւնը առաջ ընթանալու հետևանքն են: Ու-  
րեմն զիտութիւնը՝ տնտեսագիտական մեծ ուժ է:

## Հ . Զ Ր Ո Յ Յ

3. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

37.

Հասկացողութիւն դրամագլխի Մենք իմաստասիրեցինք  
մասն: արդիւնաբերութեան եր-  
կու պալմանը՝ բնութիւն  
և ախտանք: Մեզ մնում է ծանօթանալ երրորդի՝  
դրամագլխի հետ:

Մենք լիշել ենք արդէն, որ առանց միջոց-  
ների անհնար է որ և արդիւնաբերութիւն: Դա-  
տարկ ձեռքերով մարդս ոչ ինչ չէ կարող շինել:  
թէ երկրագործութեան և թէ արհեստագործու-  
թեան համար անհրաժեշտ են առանձին գործիք-  
ներ: Եթէ մարդ մրայն ձկնորսութիւնով է պարա-  
պում, նրան էլ մինչև անգամ կամ հրացան, կամ  
նետուանեղ, կամ ուռկան են պէտք: Յետոյ արդիւ-  
նաբերական գործունէութեան մէջ մարդկանց հում  
նիւթ է պէտք, արմինքն. այն նիւթը որ գործածելուց  
առաջ մշակութեան է ենթարկում: Վերջապէս,  
աշխատանքով ձեռք բերած իրերը պէտք է պահ-  
պանւին, գործիքները նոյնպէս: Դրա համար պէտք  
են շինութիւններ, ինչպէս և բանւորների գործ  
տեսնելու ժամանակ: Ամեն մի արդիւնաբերութիւն  
պահանջում է աշխատանքի ծախս (միջոցների, հում  
նիւթի, շինութեան և այլ բաների համար), որ  
պէտք է գործը սկսելուց առաջ անել: Առանց  
լդրան արդիւնաբերութիւնը անհնարին է: Այդ բո-  
որ ծախսերը անւանելում են վրամագլուխ:

Ուրեմն դրամագլուխը կանխապէս կատարած աշխատանքի հետեանքն է, ինչպէս մեղ լավտնի է, բնութիւնը մեղ ձրի ոչինչ չէ հայթալթում։ Նա նոյնպէս մեղ ձրի դրամագլուխ չէ տալիս։ Դըրամագլուխ կարող է կազմւել միայն այն ժամանակ, երբ կանխապէս, որոշ չափով աշխատանք է գործ դրած, նրան գոյացնելու համար։ Յետով, դըրամագլուխ կարող է անւանել միայն այն, ինչ որ պէտք է նոր իրեր արդիւնաբերելու համար։ Ամեն ինչ, որ մարդուս անմիջապէս գործածելու է պէտք, դրամագլուխ չէ կարող անւանել, այլ այն միայն, որ ծառալում է նոր իրեր գոյացնելու համար։ Ուրեմն դրամագլուխ չեն կարող համարել՝ տունը, որի մէջ մենք ապրում ենք, մեր կերած հացը, սեղանը, որի վրայ գրում ենք։ Սակայն շինութիւնը, որի մէջ արհեստանոցն է տեղաւորւած, մշակներին կերակրելու համար պատրաստած հացը, սեղանը, որի վրայ ամրացրած է փականագործի ճնշոցը—այդ բոլորը դրամագլուխ են, որովհետեւ նրանք մի որ և է նոր արդիւնաբերութեան են ծառալում։

Սրա մէջ են բովանդակւում երկու անհրաժեշտ պալման մի որ և է առարկայ դրամագլուխ անւանելու համար։ Նա պէտք է լինի. 1) առաջւան աշխատանքի հետեւանքը եւ 2) ծառայէ նոր արդիւնաբերութեան համար։ Այսպէս ուրեմն՝ դրամագլուխ անւում է մորդուս ամեն մի պատրաստած առարկան, որ նոր արդիւնաբերութեան է ծառայելու։

Ի՞նչպէս կարող է դրամագլուխ կազմւել։

38.  
Դրամագլխի կազմելը։ Թոյլ տանք, թէ ձկնորսը ապրում է իր ձեռքերով որսած ձկով և դրանով կերակրում է։ Թոյլ տանք, թէ ապրուստի համար նա ոչ մի այլ միջոց չունի։ Եթէ այդ ձկնորսութիւնը խլում է նրա ամբաղջ օրը և նա օրւալ ընթացքում աւելի չէ կարող որսալ, քան պէտք է նրան և նրա ընտանիքին կերակրելու համար, այն ժամանակ նա միջոց չի գտնիլ ձեռք բերելու ձկնորսութեան պիտոյքներ՝ ուռկան, կառթ, նաւակ և այլն, այսինքն, անապիսի միջոցներ, որ կաւելացնէին նրա աշխատանքի արդիւնքը։ Նրանց օգնութիւնով նա նշանաւոր չափով կը շատացնէր իր որսը, իսկ այդ առարկաները պատրաստելու համար նրան պէտք են՝ փող կամ ժամանակ։ Բայց մեր ձկնորսը ժամանակ չունի, նա ամբողջ օրը զբաղւած է ձկնորսութիւնով իրան ապրուստը ճարելու համար։ Նա փող էլ չունի, որովհետեւ օրական անքան է որսում, որքան պէտք է իր և իր ընտանիքի պարենը հոգալու համար։ Նրան վաճառելու այլ ևս ոչինչ չէ մնում։ Ի՞նչպէս կարող է նա զործի պիտոյքներ գնել, եթէ դրամագլուխ ձեռք չըերէ։

Թոյլ տանք լետոյ, որ ձկնորսի ճարպիկութիւնը աւելանալուց, կամ ձկների քանակութիւնը շատանալուց և կամ որ և է պատճառով այդ ձկնորսի աշխատանքի արդիւնաբերութիւնը մեծացաւ, որ հիմա նրա օրական որսը ապահովում է ոչ միայն նրա մի օրւան, այլ երկու օրւան ապրուստը։ Հիմա

նա ունի որոշ չափով ազատ ժամանակ: Երկու օրուանից մեկը նա կարող է ոչինչ չանել կամ մի ուրիշ գործով զբաղել: Եթէ նա այդ աւելորդ օրը գործ դնէ արդիւնաբերութեան միջոցներ ձեռք բերելու համար (ուռկան, ցանց, նաւակ և ալին), կամ ձուկ որսալու և նրա գնով արդիւնաբերութեան պիտուքներ ձեռք բերելու համար, նա այն ժամանակ զբամագլուխ կարող է կազմել: Իսկ եթէ նա իր ազատ ժամանակը գործ դնէ այնպիսի առարկաներ գոյացնելու վրայ, որ պէտք չին արդիւնաբերութեան համար, այլ միայն նրա գործածութեան համար, (օրինակ, սկսէ իր համար անօթներ պատրաստել հագուստ կարել), նա կրկին առաջւալ նըման զբամագլուխ չի ունենալ:

Այսպէս ուրեմն զբամագլուխ կազմելու համար երկու պահման է պէտք՝ 1) որ աշխատանքի արդիւնաբերութիւնը այնքան ամի, որ մի օրում աւելի պարագաներ չեն կատարվութեան համար, 2) որ օրական ապրուստը ծածկելու համար, 3) որ աշխատանքի վրայ գործադրանք ժամանակից աւելի ժամանակը գործ դրւի արդիւնաբերութեան պիտոյըներ շատացնելու, կամ նրա բարեփոխելու վրայ: Կարող է մարդու զբամագլուխը աւելանալ, եթէ նա օրւայ մէջ այնքան արդիւնաբեր է, որքան որ վատնում է: Իհարկէ, ոչ կարող է գործի տիրոջ զբամագլուխը աւելանալ, եթէ նրա բանւորը արդիւնաբերէ օրական այնքան, որքան նա ոսճիկ է ստանում: Իհարկէ, ոչ: Միայն այն ժամանակի գործի տիրոջը շահաւետ է բանւոր պահել, երբ բանւորի աշխատանքը ծածկում է՝ ոչ միայն նրան տւած ոսճիկը, ալլ և

մնում է աւելորդ՝ զուտ օգուտ: Այն ժամանակը միան նրա զբամագլուխը կարող է աճել: 39. կամ ուստի այդ հանապարհով կը կաղմէի զբամագլուխ: Պարզ է, որ նա ներկայանում է, որպէս աշխատանքից ստացած արդիւնքի խնայողութիւն: Եթէ ես արդիւնաբերում եմ ցորենը միայն իմ ապրուստի համար, ես վատնում եմ աչխատածութիւնը և այց եմ թխում, ուտում եմ ալդ հացը և վերջ: Դրանով ես ոչ մի նոր բան չեմ ձեռք բերում: Ընդհակառակը ես վատնում եմ մի որոշ առարկայ ցորեն: Եսկ եթէ ես կացին շինեմ, ես խնայում եմ այն աշխատանքը, որ գործ է գրւում կացին ստանալու համար: Այդ աշխատանքի արդիւքը՝ կացինը ինձ երկար կը ծառակէ ուրիշ գործերի մէջ և կարող է պատրաստել ինձ համար ապագայում շատ ուրիշ պիտանի իրեր: Այսպէս դրսմագլուխը, իհարկէ, վատնում է: Թեկը ոչնչանում է, երբ ես նրանից քաթան եմ գործում, ածուխը ալրում է դարբնոցում, կացինը, չարդում է, շինութիւնը հնանում է: Իհնչպէս կարող է վատնել, ինչ որ խնայում է: Ահա սրա մէջ է բովանդակում զբամագլուխի նշանաւոր զանազանութիւնը բոլոր այն առարկաներից, որոնք ստացւում եմ մարդու աշխատանքով: Դրամագլախը վատնում է, որ վերածնի նոր կերպարանքով, այն ինչ միւս բոլոր առարկաները վատնում են անդառնալի կերպով: Թեկը վատնում է, սակայն նրա տեղը

ստացւում է քաթան, ածուխը այրւում է, սական նրա տեղը դարբինը ստանում է վաճառելու մի նոր առարկայի, կացինը ջարդում է, սական այն պատճառով, որ մինչև հիմա նա օգնում էր մարդու շատ առարկաներ պատրաստելու համար, գործարանը հնանում է, սական մինչև արդ, նրա մէջ պատրաստում էին շատ առարկաներ, իսկ եթէ կերակուր ուտում են, հագուստը մաշում են, մեր ընակարանը հնանում է, այն ժամանակ նրանք ոչնչանում են իսպառ ևոչ մի նոր բան մարդու ձեռքին չէ մնում: Հարկաւոր է հաստատապէս ըմբեռնել՝ զրամագլխի արդ կերպ ծախսելը բոլոր ուրիշ առարկաներու ծախսելուն հակառակ: Մենք կիմանանք հետեւելում, որ կան այնպիսի դրամագլուխներ, որոնք միան նրանով են օգուտ բերում մարդկանց, որ ամբողջովին են վատնում:

### Փ. Զ. Պ. Յ. Յ

40.

Դրամագլխի կազմութիւնը: Ալսպէս ուրեմն մենք իմացանք, թէ ինչ բան է զրամագլուխը, ինչպէս է նա գուանում և ինչպէս է ծախսում: Տեսնենք հիմա, թէ ինչ բաներ են կեանքի մէջ զրամագլուխ անւանում, ինչից են կազմում մարդկանց զրամագլուխները:  
Առաջինը՝ դրամահղուխ են անւանում հում նիւ-

ներ, իւրաքանչիւր ոստախնանի գործարանին պէտք է կամ կթաւատի, կամ կանեփի թել, բուրդ կամ բամբակ: Իւրաքանչիւր դարբինի կամ փականագործի՝ երկաթ կամ պղղպատ: Իւրաքանչիւր ատաղձագործի կամ հիւսնի փակտեղէն և ալլն. Այդ բոլորն էլ անւանում են հիւմ նիւթեր, Նիւթը ծեռք է բերում և նրան անփէս ձեւ է տրւում, որ նա պիտանի է դպոնում մշակութեան համար: Ուրեմն արդ բոլորի վրայ ծախսւած է մարդկային աշխատութիւն, առաջ քանի թէ նա մտել է նոր գործադրութեան մէջ, (օրինակ, ծառը կտրատում է, տեղափոխում է ցամաքի կամ ջրի վրայով և ալլն): Երկրորդը՝ դրամագլուխ են անւանում բոլոր դործիքները, մնենաները և շնութիւնները, որ օգնում են աշխատանքի արդիւնաբերութեանը, (ատաղձագործի, դարբինի գործիքներ, շոգեմեքենալ, զիւղատնտեսական և ալլ գործիքներ, գութաններ, էրնոցներ, կալեր, կրկաթուղիներ և ալլն, և ալլն): Հասկանալի է, որ դրանք բոլորն էլ մարդու առաջւան աշխատանքի արդիւնքն են և բոլորն էլ ծառալում են նոր ադիւնաբերութեան գործին:

Երրորդը՝ դրամագլուխ է անւանում՝ տնական կենդանին, անասունը ինարիէ, նա մարդու աշխատանքով չէ գոյանում, սական նրան պահելու, կերակրելու համար քիչ աշխատանք չէ գործ դրւում և որովհետեւ նա օգնում է մարդու նրա արդիւնագործութեան մէջ, արդ պատճառով մենք կարող ենք նրան էլ զրամագլուխ անւանել: Եղները, որոնցով հող ենք վարում, ձիաները, որոնցով շար-

Ժում ենք կալը կամ խնոցին և ալն, ալդ բոլորը,  
իհարկէ դրամազլուխ են:

Չորորդը՝ դրամազլուխ են անւանւում այն բա-  
րեկարդութիւնները, որ կատարում է մարդս իրան  
շրջապատող բնութեան մէջ, նրանից աւելի օդ-  
տելու համար: Ամափի անսապատում կազմակեր-  
պում են ջրանցք, հորեր, ջրամբարներ, որ կա-  
րելի լինի հացահատիկ ցանել, անսասուն պահել:  
Ծովերի ափերին ցած ընկած ակեղերում բարձրա-  
ցնում են ամբարտակներ, որ պաշտպանւին ալիք-  
ների բաղխումից: Անբերը հողերին պարարտութիւն  
են տալիս, (աղը կամ արհեստական պարարտու-  
թիւն), որ հողը բերք տալ: Մեծ սարի մէջ կարում  
են գետնանցքներ (տունելներ), որ կարելի լինի  
նրանց միջով հասարակ կամ երկաթուղու ճանա-  
պարհներ անցկացնել և ալն: Ալդ բոլորը մարդ-  
կանց ուժին աշխատանքի պտուղներ են և նրա  
համար են կատարում, որ արդիւնաբերութիւնը  
ընդլանացնեն, աւելացնեն:

Հինգերորդը՝ դրամազլուխ են անւանւում բնա-  
կարաններ, շինութիւններ, որոնք ծառալում են  
կամ աշխատաւորներին իրեւ պատսպարան, կամ պատ-  
րաստած իրերի պահեստ: Սրանց կարդին են՝ բո-  
լոր արհեստանոցները, գործարանները, ամբար-  
ները, մագազինները և ալն, մի խօսքով ամեն  
ինչ, որ պահպանում է արդիւնագործութիւնը՝ օ-  
դից, շոգից, կրակից և ուրիշ ամեն տեսակ բնա-  
կան վնասաբեր երեսութներից:

Վերջապէս, վեցերորդ՝ դրամազլուխ են անւա-  
նում մի որ և է զործարանում բանորներ պահելու

վրայ գործ դրած բոլոր միջոցները: Եթէ ես բանւոր-  
ներ չունիմ և ապրում եմ միակն իմ աշխատան-  
քով, կարելի է իմ ուտելիքը, հագուստը, բնակա-  
րանը դրամազլուխ անւանել: Դրանք, իհարկէ, ա-  
ռաջւան աշխատանքի պտուղ են, սակայն ծառա-  
լում են նոր արդիւնաբերութեան գործին: Իհար-  
կէ, ոչ: Մարզս ուտում է որ ապրի և ոչ թէ կրկին  
աշխատելու համար: Այս պատճառով ալդ բոլորը  
չէ կարելի դրամազլուխ անւանել: Սակայն, եթէ  
ես կերակրում եմ իմ բանուորներին, նրանց ոռջիկ  
եմ վճարում, նրանց հոմար բնակարան եմ շինում,  
նրանց կերակուրը, նրաց վճարած փողը, բնակա-  
րանը կարելի է իմ դրամազլուխը համարել: Այն,  
իհարկէ: Սրանք բոլորը նոյնպէս աշխատանքի պը-  
տուղ են: Նրանք նշանակւած են արդեօք նոր ար-  
դիւնաբերութեան համար, իհարկէ, նշանակւած են:  
Ես կերակրում եմ բանուորներին, որ նրանք ինչ  
համար որոշ գործ կատարեն: Եւ ալդ պատճառով  
բոլոր միջոցները, որոնցով վճարում է բանուորնե-  
րի աշխատանքի գինը, գործի տիրոջ դրամազլուխն  
է կաղմում:

Սրանք են դրամազլուխ կազմող մասերը, մեզ  
մնում է շիշտել նրանց մէջ եղած նշանաւոր զա-  
նազանսւթիւնը:

41.

Հիմնական, շրջանառու դրա-  
մազլուխ: Մենք տեսանք, որ դը-  
րամազլուխը ծախսուու-  
է, սակայն բոլոր դրա-  
մազլուխները միանման չեն ծախսում: Եթէ դարբ-

նի հնացի մէջ ածուխ է լցրած՝ նա մէկէն է ալր-  
ւում: Եթէ վայտեղէն է զործ դրած, նա ևս միան-  
մի անդամ է ծառալում: Այս ինչ տախտակից կա-  
րելի է մի առարկալ միաբն շինել և այնուհետև ողի  
տախտակը ոչ մի ալ արդիւնաբերութեան չէ ծա-  
ռալում: Բայց եթէ ևս ինձ համար գութան եմ  
պատրաստել, նա չի ոչնչանալ նրանով մի ակու-  
հող կորելոց իւտոյ: Նա ինձ երկար է ծառալում,  
գործածութեան մէջ անպէտքանալուց առաջ, նրա-  
նով ևս վարում եմ շատ օրավար հող: Եթէ նա-  
վարում է տարեկան 50 օրավար և ալդպէս շարու-  
նակ վարում է հինգ տարի, նա կը վարէ ընդամենը  
250 օրավար: Առաջին դէպքում բոլոր ածուխը և  
ամրող տախտակը վատնւում են մէկէն և միան-  
մի առարկալի վրայ: Խակ ալստեղ ամեն մի օրավա-  
րի վրայ վատնւում է գութանի միալն մի երկու  
հարիւր լիսուներորդ մասը կամ ան փողի<sup>1/250</sup>  
մասը, որ տած է նրան գնելու համար: Ակտ զա-  
նազանութիւնը շատ նշանաւոր է: Յետոյ ուշադրու-  
թիւն դարձեք այն հանգամանքի վրայ, որ ածու-  
խը և փալաը նրանով իսկ օգուտ են բերում, որ ոչն-  
չանում են: Ինչով է պիտանի ածուխը: Նրանով,  
որ պիրում է: Ինչով է օգտաւէտ տախտակը: Նը-  
րանով, որ պէտք է զանազան առարկաներ շինե-  
լու համար: Եթէ ածուխը չալրւէր, տախտակը պէտք  
չդար, նրանք իրանց կողմից մարդկանց օգուտ չէին  
տալ, զրամագլուխ չին համարւի: Ընդհակառակը,  
որքան որ գութանը երկար դիմանալ, ալնքան նա-  
աւելի օգտակար կը լինի մարդու: Նա օգտակար  
է ոչ թէ նրանով, որ ոչնչացող է, ալլ նրանով, որ

երկոր է ծառայում և որքան աւելի երկար, ախճքան-  
աւելի օգտակար է: Ի՞նչ օգուտ կարելի էր սպա-  
սել երկրագործութիւնից, եթէ ամեն մի օրավարին-  
մի մի գութան հարկաւորէր:

Ալսպէս ուրեմն, զրամագլուխ ծախսելու իղա-  
նակին նախած, նա կարող է երկու տեսակ լինել:  
Նա կամ միանգամից է ծախսում, կամ նետքինուէ: Ա-  
ռաջին դէպքում, նա իր նշանակութիւնը նրանով  
է արդարացնում, որ ոչնչանում է փոփոխում է իր ծերը:  
Երկրորդ դէպքում նրանով, որ շարունակում իր գո-  
յութիւնը պահպանել: Առաջին դէպքում նա անւան-  
ուում է շրջանառու զրամագլուխ, երկրորդ դէպքում  
հիմնական Հիմնական զրամագլուխը ծառալում է  
շատ գործերի, ուշ է ոչնչանում և հետզհետէ, մաս առ  
մաս վերականդնուում է պատրաստոած շատ առարկա-  
ների միջոցով, խակ ըլշանառուն գործադրուում է  
միան մի անգամ և օգտաւէտ է իր վատնելով և  
վերածնուում է ամրողչապէս իր գուացրած մի ա-  
ռարկալի միջոցով: Մեր օրինակի մէջ գութանը  
վերածնուում է 250 վարած օրավարի մէջ, ալսինքն,  
250 օրավարից ստացւած արդիւնքի մէջ՝ բովան-  
դակուում է և գութանի վրայ արած ծախսը: Սա-  
կան եթէ մի մեխ պատրաստելու համար մի զըր-  
ւանքալ ածուխ է պէտք, այն ժամանակ մի մեխի  
օգուտի մէջ բովանդակուում է, վերածնուում է մի  
զրւանքալ ածուխի կինը:

Բոլորովին հասկանալի է, որ զրամագլուխ-  
ներ կազմող վեց մասերից շրջանառու զրամագլուխն-  
վերաբերում են՝ հում նիւթեր և բանորներ պահելու  
ծախսը: Միան սրանք են մի անգամից վատնւում:

Քոլոր մնացածները հետզիետէ ևն վատնւում, ծառալում ևն շատարդիւնաբերութիւնների և այդ պատճառով պատկանում ևն հիմնական դրամագլխին:

Որքան աւելի է ընդարձակում մարդկանց գիտութիւնը, որքան աւելի է ընդլայնանում նրա արդիւնաբերական գործունէութիւնը, անգքան աւելի ձեռագործի տեղը բռնում է մեքենան, որ աւելի արդիւնաւէտ է, ուրիշն՝ շրջանառու դրամագլխի տեղը բռնում է հիմնականը. Արդեօք միշտ շահաւէտ է այդ փոխարինութիւնը. Եթէ մի տեղ ոստայնանկը պատրաստում է ձեռքով 600 արշին մահուղ և եթէ արդ տեղ դրանից աւելի անհնար է վաճառել, շահաբեր կը լինի ձեռք բերել թանկագլխն մեքենալ, որ պատրաստում է տարին 6000 արշին, սակայն վաճառել չէ կարելի. Իհարկէ ոչ 5400 արշինը գնող չեն ունենալ և ի զուր կը կարչին. Մեան այն ժամանակ, երբ մեքենայի տւած բոլոր նոր իրերը կարող լինին վաճառւել, կարելի լինի նրանց գնող դոնել, միայն այդ զէպքում օգտաւէտ է վնում ծեռքի գործը մեքենայի փոխել. Այստեղ կայ և մի ուրիշ պահման, որից կախւած է մեքենալ գործագրելու օդտաւէտութիւնը. Եթէ, օրինակ. մեքենան իր գործողութեան միջոցը տւեց ընդամենը 100 բուրլով աւելի իրեր, քան թէ պատրաստում էր առաջ նորնքան ժամանակւալ մէջ առանց մեքենաչի, իսկ մեքենան ինքը արժէ 200 ր, և մինչև անդամ 100 ր. օգնուտ է արդեօք մեքենալ գնել. Պարզ բան է, վընա է, կամ գոնեալ, անօգուտ է. Օգտաւէտ կը լինի նա միայն այն ժամանակ, երբ նրա գինը աւելի

պակաս է, քան թէ իր աւելորդ պատրաստած իրերի զինք և որքան պակաս է, այնքան նա օգտաբեր է:

Եղանակ Ձրան ք. Զ. Բ. Ռ. Պ. ՅաՅ մի միջնականութեան զրոյն և ուստաման առաջնորդ ու ուսուած արդարական մի մասնական զրոյն առաջնորդ է. 42.

Եկամուտ. Մենք իմացանք արդէն, թէ ինչ պատմաներ, են պէտք, որպէս զի մարդս պատրաստէ ամեն ինչ որ բաւականութիւն է տալիս նրա կարիքներին, այսինքն, մենք իմաստափեցինք արդիւնաբերութիւն. Հիմա իմաստափենք արդիւնաբերած իրերի բաշխումը.

Ամեն ինչ, որ ստեղծում է մարդկանց արդիւնագործութիւնով, անւանւում է՝ եկամուտ. Ամեն ինչ, որ վաստակում է երկրագործ կամ արհեստաուրը, նրա եկամուտն է. Մի որ և է երկրի ամբողջ տալեկան եկամուտը կազմեւում է այն բոլոր իրերի գումարով, որ արդիւնաբերում է նրա թուր ազգաբնակութեան աշխատանքով — օրերի ընթացքում. Իհարկէ, եկամուտը կարող է գործադրւել նոր արդիւնաբերութեան, կամ անձնական ծախսերի վրայ և կամ վատնել բաւականութիւնների վրայ, սակայն, ինչ բանի վրա էլ որ գործադրւի իւրաքանչիւր արդիւնաբերած առարկալ, մի և նոյն է, նա անւանւում է եկամուտ և կաղմում է երկրի եկամուտի մի մասը, որպէս մարդկանց արդիւնաբերութեան հետեանքը:

43.

Ընդհանուր եւ գուտ եկամուտը՝ Եկամուտը լինում է ընդհանուր և գուտ. թէ առանձին մի տնտեսութեան և թէ ամբողջ երկրի ընդհանուր եկամուտ՝ անւանում է ամբողջ եկամուտի գումարը, որ ստացւած է մի ամսում, մի տարում, մէկ խօսքով՝ որոշ ժամանակամիջոցում. Գուտ եկամուտի գումարը ստանալու համար, պէտք է՝ ընդհանուր եկամուտի գումարից զուրս գալ արդիւնագործութեան բոլոր ծախսերը. Դիցուք թէ, ատաղձագործը տարւալ ընթացքում աշխատել է ընդհանուր 800 ր., կամ թէ նա այդ մոջոցում պատրաստել է այդ արժէքի առարկաներ. Նրա զուտ եկամուտը ստանալու համար պէտք է այդ 800 ր. դուրս գալ արդիւնագործութեան վրայ դրած բոլոր ծախսերը: Այդ բնչ ծախսեր են: Առաջինը՝ դա հում նիւթեր զնելու ծախսն է, վետոյ՝ դա բնակարանի կամ բընակարան շինելու համար գնած, հողի ծախսն է, դրանից լետով՝ արդիւնագործութիւնը ընդլանացնելու համար պարտք վեր առած զումարի տոկոսն է, վերջապէս, վարձկան բանորներին տւած վարձատրութիւնը, եթէ նրանք մասնակցել են արդիւնագործութեան մէջ: Եթէ մենք ենթադրենք, որ այդ բոլոր ծախսեին զումարը կազմում է 500 րայն ժամանակ հասկանալի է, որ ատաղձագործի զուտ եկամուտը հաւասար է 300 բուլու:

44.

Եկամուտի բաժանումը: Մենք գիտենք, որ մի որ և է առարկալ պատրաստելու համար, անհրաժեշտ են երեք պայման:

Ժնութեան պարզեներ, աշխատանք և դրամագոլուխ: Շատ քիչ է պատճում, որ մի և նոյն մարդը, անձամբ աշխատելիս, ունենալ՝ տնտեսութեան համար հարկաւոր բնութեան պարզեած բոլոր ուժերը և նիւթերը և բաւականաչափ դրամագոլուխ: Հաղիւ էլ պատահում է, որ այդ բոլորը ունեցողը անձամբ աշխատի: Պատահում է, որ երկրագործը ունի բաւականաչափ հող, որ ուրիշից պարտքով չէ վեր առնում զրամագոլուխ (գործիքներ, տաւար, սերմ) և մշակներ չէ պահում: Սակայն այդպիսի գէպքեր հազարիւթ են: Աւելի լաճախ երկրագործը վարձում է ուրիշի հողը, պարտքով վեր է առնում՝ անասն, սերմ և ալյն, կամ թէ այդ բոլորը գնելու համար պարտք է անում: Իսկ եթէ նա ապոհոված է և այդ ամենը բաւական չափով ինքն ունի, մեծ մասամբ վարձում է մշակներ, որոնց սոճիկ է տալիս: Պատահում է, որ արհեստաւորը մէնակ է աշխատում, հողի վրայ չինած արհեստանոցում և բաւականաչափ զրամագոլիսի տէր է (ունի գործիքներ, նիւթեղէն և ալյն): Աւելի լաճախ նա դորձում է ուրիշի գործիքներով, ուրիշի արհեստանոցում: Կամ եթէ այդ բաները ինքն էլ ունի, վարձում է բանագորներ, որոնց սոճիկ է վճարում:

Մեզ լայտնի է, որ մարդկանց կարիքներին բաւականութիւն տող բոլոր իրերը, զլուխ են բերում աշխատանքով: Սակայն աշխատաւորը՝ այսինքն, մշակը չէ ստանում իր արդիւնաբերութեան բոլոր եկամուտը: Աշխատանքը սերտ կապւած է արդիւնաբերութեան միւս երկու պայմանների հետ: Եթէ նրան չօգնէին՝ բնութեան պարզեները

և զրամագլուխը, նա հնար չեր ունենար մարդկութեանը տալ այն օգուտը, որ հիմա է տալիս. Սակայն մենք նոր իսկ տեսանք, որ մէկը և միւսը միայն հաղափուտ դէպքերում պատկանում ենք բանւորներին, Հասկանալի էր որ բնութեան պարգևների և դրամագլխի տէրերը իրանք էլ իրանց համար եկամուտից բաժին են պահանջում. Ալդպիսով աշխատանքի վարձից պէտք է հանել այդ մարդկանց ստացած մասը. Այն մասը, որ ստանում է բնութեան տուրքերի տէրը անւանում է բնատուրք (քետա), այն, որ ստանում է դրամագլխի տէրը անւանում է շահ, վերջապէս, այն մասը որ մնում է աշխատաւորին անւանում է վաստակ. Հասկանալի է, որ այդ բոլոր մասերը կարող է ստանալ մի և նորն մարդը, եթէ նրան պատկանում են՝ թէ բնութեան պարգեները՝ թէ դրամագլուխը և թէ աշխատանքը: Նրաց կարող են ստանալ երկու մարդ, եթէ մէկին պատկանում է բնութեան պարգեները և աշխատանքը, միւսին դրամագլուխը՝ կամ մէկին՝ բնութեան պարգեները և դրամագլուխը, միւսին՝ աշխատանքը, կամ մէկին՝ պատկանում է բնութեան պարգեները, միւսին դրամագլուխը, իսկ երրորդին՝ աշխատանքը: Այդ պատճառով երկրի եկամուտը այդ երեք մասերի բաժանելը չէ նշանակում, թէ հասարակութեան մէջ միշտ զոլութիւն ունին երեք առանձին դասակարգ, որոնցից մէկին պատկանէր միայն հոգը, երկրորդին՝ միայն աշխատանքը, իսկ երրոր-

դին՝ միայն դրամագլուխը: Ալդպիսի բաժանմունքերենին է պատահում, Օրինակ. Անգլիանում կալւածատէրները կապալով ին տալիս իրանց հողերը, ըստ մեծի մասին մեծ կտորներով, իսկ կապալառուն ինքը մշակներ է վարձում: Այնտեղ կապալառունները լրացնում են դրամագլխի բոլոր ծախոր, իսկ հողից զորկ մշակները ազգում են միայն աշխատանքի վարձով: Աւելի յաճախ եկամուտը բաժանում է երկու հոգու մէջ, որովհետեւ մշակը միշտ բերում է իր հետ միայն աշխատանքը, իսկ բնութեան պարգեների տէրը ունի շատ անգամ և արգիւնագործութեան համար հարկաւոր դրամագլուխը:

Ճ. Զ Պ Ո Յ Յ

1. ԲՆԱՏՈՒԹԻՒՆ

Որոշումն: Ես ասացի արդէն, որ բնատուրքը է անւանում արդիւնագերութեան այն մասը, որ ստանում է բնութեան պարգեների տէրը եւ նրանց օգնութիւնով մի որ եւ է առարկայ է ստեղծում: Նա ով իր հողի վրա ինքն է գիւղատնեսութիւն անում, ինչպէս մենք գիտենք, եկամուտների կարգում ստանում է և բնատուրքը: Բնատուրք է վճարում և կապալառուն հողի տիրոջը,

Քնատուրի եւ կսպալի զա՝ Սակայն հարկաւոր է նադանութիւնը։ Տիշտ զանազանել բնաւորքը կապալից։ Երբեմն կապալով վճարում է միայն բնատուրքը, այսինքն երբեմն բնատուրքը նմանում է կապալին։ Բայց պատահում են և ալլ գէպքեր։ Մեծ մասամբ բնատուրքը կապալի միայն մի մասն է կազմում։ Եթէ ես հողատիրոջից վարձել եմ նրա ալնափիսի հողը, որի վրայ նա երբէք ոչ մի կոպէկ չէ ծախսել, որի վրայ նա ոչ մի դրամագլուխ չէ դրել, այն ժամանակ ես վճարում եմ նրան, միայն իրան պատկանած բնութեան պարգևների վարձը, այսինքն։ բնատուրք և ուրիշ ոչ ինչ։ Ուրեմն իմ վճարած կապալի մէջ բացի բնատուրքը ոչ ինչ չէ մտնում։ Իսկ եթէ հողատէրը հողի հետ իմիափին տալիս է ինձ և այն դրամագլուխը, որ նա ծախսել է ալդ հողի վրայ (շինութիւններ, զործիքներ, սերմ, անասուն, պարարտութիւն, ջուր և ալլն), այն ժամանակ իմ վճարած կապալի մէջ բովանդակում է ոչ միայն բնատուրք, այսինքն նըրան պատկանած բնութեան պարգևների վարձը, ալլ և նրա դրամագլուխի եկամուտը, այսինքն ծախսած դրամագլիքի արդիւնքը։ Այսպէս ուրեմն։ Երբեմն կապալալարձով միայն բնատուրք է վճարում, իսկ երբեմն։ բնատուրք և շահ, նալելով, թէ արդիւնքը բովանդակում է պատկանում։ միայն կապալատիրոջը, թէ նրա միաման էլ պատկանում է հողատիրոջը։ Եթէ դարբինը իր համար

Դարբնոց է շինում օտարի հողի վրայ, բայց իր փողով, նա արդեօք հողատիրոջը միայն բնատուրք է վճարում։ Կապալի ձևով, իհարկէ, որովհետեւ աս դէպքում հողատիրը ոչ մի դրամագլուխ չէ զրել։ Իսկ եթէ զարբինը վճարում է հողատիրոջը նրան պատկանած դարբնանոցի շինութեան վարձը, վըճարում է նա միայն բնատուրք։ Իհարկէ, ոչ, որովհետեւ բացի բնատուրքը ալդ վճարի մէջ մտնում է և, զարբնոցի շինութեան վրայ հողատիրոջ ծախսած, դրամագլուխի շահը։

Բնատուրքի ծոգումը։ Սակայն հարկաւոր է գիտ նաև, որ ամեն հող բնատուրք չէ բերում։ Կան հողեր, որոնցից արդպիսի եկամուտ երբէք չէ սաացում։ Թողլ տանք, թէ մի օրավար ցորենի արտ մշակելը արժէ 18 ր. (այսինքն։ ալդքան է գնահատում աշխատանքի վարձը)։ Այնուհետև թողլ տանք, որ հողատիրոջ ամքող դրամագլուխը (շինութիւնով, գործիքներով, սերմով), անասունով (և ալլն), հաւասար է 40,000 ր. 100 օրավար հողի վրայ Հաշւելով փողի շահը 5%, նա պէտք է օգուտ ստանալ 200 ր. կամ օրավարից 2 ր.։ Այսպիսով ալդ հողի վրայ աշխատանքի վարձը (18 ր.) և շահը (2 ր.) կազմում է ընդամենը 20 ր. եկամուտ։ Թողլ տանք, թէ օրավարից ստացում է 2 սոմառ ցորեն։ Եթէ ցորենի սոմառը արժէ 10 ր. այնժամանակ ալդ հողը բացի աշխատանքի վարձը և փողի շահը ոչ մի աւելորդ չէ տալիս,

ալսինքն, նա բնամուրը չունի, Աւելի լաւ հողից միշտ և նոյն ծախսով կարելի է ստանալ աւելի մեծ բերք, օրինակ. Յ սոմառ, և ուրեմն ալդ հողը բնատուրը կը տալ մէկ սոմառ կամ 10 ր. կամ թէ նոյն բերքը, բայց աւելի քիչ ծախսով, ասենք 15 ր. ծախսով և այն ժամանակ նա տալիս է բնատուրը 1/2 սոմառ, կամ 5 ր. ուրեմն բնատուրը չէ ստացում անբերի հողերից եւ որքան որ հողը լաւ լինի, այնքան էլ նրա բնատուրը մեծ կը լինի. Ինչու ալդ արդպէս է: Այենքին լաւոնի չէ, որ նաւահանգիստ ունեցող քաղաքներում ցորենի զինը ամենքի համար հաւասար է լինում: Տասը փթանոց ցորենը ամենքը ծախսում են մի և նոյն գնով և ալդ գնով ծախսում է, թէ նա, որին օրավարի մշակութիւնը արժէ 10 ր., թէ նա որին արժէ 20 ր. և թէ նա, որին արժէ 25. Պարզ է ուրեմն, որ որքան մշակութիւնը աման լինի, այնքան հողագործը աւելի կը ստանա: Հասկանալի է նոյնպէս, որ վաստակը այնքան աւելի կը լինի, որքան որ ցորենի տեղափոխութիւնը աման լինի: Այս պատճառով բնատուրքը աւելի կը ստացւի այն հողից, որ աւելի մօտ է գըտնւում չուկալից, քան թէ այն հողից, որ հեռու է գտնւում, (եթէ ալդ հողերի որակութիւնը միասնակ են): Իսկ եթէ շուկան երկու հողից էլ հաւասարաշափ հեռաւորութիւն ունի, աւելի բնատուրք կը ստացւի լաւ որակութիւն ունեցող հողից:

Այնուհետև ինկատի առնենք, որ ցորենի զինը պէտք է ծածկէ անպատճառ արդիւնագործութեան ամենամեծ ծախսերը: Մեր առաջ բերած օրինակի-

մէջ աշխատանքի վարձը և շահը հաւասար էին 20 ր., օրավարը տալիս էր 2 սոմառ, թոյլ տանք, թէ ամենալաւ հողն էլ տալիս է 2 սոմառ, բայց 10 ր. աշխատանքի վարձով և փողի շահով, աւելնքն թէ, սոմառի գինը 10 ր. չէ, ալլ 5 ր. Բնէ կը գուրս դար, Առաջին հողատէրը իր երկու սոմառից, (ինչպէս և երկրորդը), կը ստանալ միայն 10 ր. և ուրեմն կունենալի է 10 ր. զուտ վնաս նա կարգ է շարունակել իր գիւղատնտեսութիւնը, Ինարկ է ոչ: Նա պէտք է ամեն ինչ ծախսիէ, թողնի հողը և պարապի մի ալլ գործով, Ուրեմն ստացւած ցորենի քանակը ալդ գէպքում կը պակասէր և մարդիկ չէին ստանալ այնքան ցորեն, որքան նրանց պէտք էր: Այս պատճառով հարկաւոր ցորենի քանակը չը պակասացնելու համար, սոմառի գինը պէտք է ծածկէ արդիւնագործութեան ամենամեծ ծախսերը, այսինքն ամենավատ հողերը մշակելու ծախսերը: Եթէ կան մի քանի հաւասարաշափ հողագործիններ, որոնց մէկի վրայ արդիւնագործութեան ծախս հաւասար է՝ 25 ր., միւսի վրայ՝ 20 ր., երբորդի վրայ՝ 15 ր. և չորրորդի վրայ՝ 10 ր. և նրանց ցողութեան մշակելուց օգուտ չէր ստացւի: Իսկ եթէ նրանցից ամեն մէկը տալիս է 25ական ր., ուրեմն առաջինի (ամենալաւի) բնատուրքը հաւասար է 15 ր., երկրորդինը՝ 10 ր. երրորդինը՝ 5 ր., իսկ չորրորդը (ամենավատը) բնատուրք չէ տալիս: Վերջապէս, կարող է հացի գինը այնքան

բարձրանալ, որ ամենավատ հողերի եկամուտը մշակութեան ծախսից բարձր լինի, Այն ժամանակ ալդ հողերն էլ բնատուրք կը տալին. Սովորաբար ալդ արդաբէս չէ լինում: Չը որ ամեն մի հաց առնող աշխատում է աժան գնել և ամեն մի վաճառող աշխատում էիր ապրանքը թանկ ծախել: Ալդ պատճառով հացի գինը գգտումն ունի, որքան կարելի է, պակասել միախան թէ արնքան լինի, որ հողագործը աժանութեան պատճառով հարկազրւած չըլինի իր գործը թողնելած չէ մասն չ պարագանու նայուած անդամ փոխողը լրա մի դրասարաւ թուղարած և 48. այսաւ զօնացմբ քայլ ցաւածոց դժ զայտ ցմազ մասս ու մասս մասս ու մասս մասս մասս Բնատուրը հաշւելու եղանակը: Ուրեմն կրկնենք մի նույն գայլ զայտ պատճառ անդամ անդամ անդամ անդամ էլ մեր ասածը՝ ամենավատ հողերը բնատուրը չեն կարող տալ: Որքան որ հողը լաւ լինի, այնքան նրա բնատուրը բարձր կը լինի: Ուրեմն բնատուրքը նրանից է ծագում, որ բոլոր հողաբաժինները հաւասար չեն որպակութիւնով և չուկալից հաւասար հեռաւորութեան վրայ չեն գտնուում: Խնչպէս պէտք է բնատուրքը հաշւել: Մենք ալդ արդէն կատարել ենք մի անգամ: Հարկաւոր է միայն որոշ հոգաբաժինների արդիւնագործութեան ամենափոքր ծախսերը հանել ամենամեծերից, եթէ նրանց եկամուտները հաւասար են իրար կամ, (որ մի և նորնն է), եթէ ունենք հողաբաժիններ հաւասարաչափ ծախսերով, բայց ոչ հաւասար եկամուտներով, այն ժամանակ իրաքանչիւր նոգաբաժնի եկամուտից պէտք է հանել ամենավատի եկամուտը: Ահա օրինակ՝ թուլլ տանք, թէ մննք ունինք 50 օրավարնոց երեք կտոր հող: Մի և նորն

Ճախսերով առաջինից ստացւում է 200 սովառ ցորեն, երկրորդից՝ 100, երրորդից՝ 50. Թող բոլոր արդիւնագործութեան ծախսերը մի օրավարի համար հաւասար լինի 10 ր. Կամ իւրաքանչիւր հոգաբաժնի համար 500 ր. Մի սովառ ցորենի գինը կը լինի 10 ր., որովհետև ամենավատ հողի մի օրավարը տալիս է մի սովառ հաց, Առաջինի եկամուտը կը լինի հաւասար 2000 ր. Երկրորդինը՝ 1000 ր. և երրորդինը՝ 500 ր. Պարզ բան է, որ առաջինի բնատուրքը կը լինի  $2000 - 500 = 1500$  ր., երկրորդինը՝  $(1000 - 500) = 500$  ր., իսկ երրորդը  $(500 - 500)$  բնատուրք չէ տալիս. Այդ երեք կտորների բոլոր բնատուրքն է, իհարկէ  $(1500 + 500) = 2000$  ր.:

2 F. 2 R 0 3 3

## 2. ՀԱՅ

Հասկազողութիւն։ Անցնենք շահին, ալսինքն, (ինչ պէս արդէն գիտենք) եկամուտի այն մասին, որ պատկանում է դրամագլխի տիրոջը։ Բնչ բան է շահը։ Հասկանալի է, որ դա այն մնացորդն է, որ ստացւում է, եթէ մնաք բոլոր եկամուտի գումարից հանենք բնատուրքը։ և աշխատանքի վարձը։ Թողլ տանք, թէ ես ինքս դարձին չեմ, բայց ես վարձում եմ ուրիշից մի կտոր հող մնանապարհի վրայ, շինում եմ այնտեղ մի դարբանոց և պահում եմ այնտեղ մի վարձկան դարբին, որ բանում է իր զործիքներով և իմ ածուխով։

Յողակ դարբնոցի տարեկան ընդհանուր եկամուտը լինի 800 ր. Բնշպէս պէտք է ես հաշւեմ իմ դրա՛ մագլիսի շահը. Դուրս զանք առաջ հում նիւթի գինը, ասենք, 300 ր. մնում է 500 ր. Հանենք հողատիրոջը իմ վճարելիք բնաւտուրքը, ասենք 50 ր., մնում է 450 ր. Դուրս զանք դարբինին պահելու համար ունեցած ծախսը՝ (ոռձիկ, կերակուր և ալն) ասենք՝ 200 ր. մնում է 250 ր. Վերջապէս, հանենք ծախսած դրամագլուխը (դարբնոցի կարկատանը, գործիքները և ալն) վերակազնեցնելու համար՝ 50 ր. մնում է 200 ր. Ահա այդ վերջին մնացորդը կազմում է գործի վրայ դրած իմ դրամագլխի շահը. Եթէ այդ դրամագլուխը ամբողջապէս հաւասար է 2000 ր., ալն ժամանակ ես ասում եմ, որ այդ դարբնոցը, այդ ծեռնարկութիւնը տալիս է ինձ  $10\%$ , իսկ եթէ դրամագլուխը 4000 ր. է, ալն ժամանակ  $5\%$  և ալն:

50.

Հահի ծագութը, Ո՞րտեղից է ստացւում շահը: Կշռեցէք, ես օգուտ կունենալի վարձկան դարբին պահելու, եթէ ամեն ինչ, որ նա ինձ համար վաստակէր, ես նրան տաշի, որպէս ոռձիկ, աշխատանքի վարձ. Իհարկէ, ոչ Միայն ալն ժամանակ ես օգուտ ունիմքանուր պահելու, երբ նա ինձ համար իր ստացածից աւելի է վաստակում: Թողլ տանք, թէ ես նրան վճարում եմ տարին 200 ր. Եթէ նա վաստակէր ինձ համար տարի գլուխ միայն 200 ր., ես վնաս կը կրէի,

որովհետեւ դարբնոցի վրայ ես ուրիշ ծախսեր էլ ունիմ: Թողլ նա ինձ համար վաստակէ 600. (այսինք. բոլոր ծախսերը առանց օգուտի), այն ժամանակ էլ նրա աշխատանքից ես ոչ մի օգուտ չեմ ունենալ: Եւ միայն ալն դէպօտմ, երբ նա ինձ տալ 600 ր. աւելի, օրինակ 800 ր., միայն այդ դէպօտմ ինձ հաշիւ է իմ դրամագլուխը ծախսել: Այս օրինակի մէջ դարբինի ոռձիկը ( $^{200}/_{800}$ ) դարբնոցի ընդհանուր եկամուտի  $1/4$  մասն է: Այս պատճառով, եթէ նա աշխատում է օրական 10 ժամ, նշանակում է, նա նրանցից իր համար աշխատում է ժամանակի միայն  $1/4$  մասը ( $^{10}/_{4}$ ),  $2\frac{1}{2}$  ժամ, դարբնատիրոջ համար (այսինքն. դրամատիրոջ համար) նա աշխատում է  $7\frac{1}{2}$  ժամ: Միայն ալն ժամանակ, երբ դրամագլուխը իրան, դարբինին է պատկանում, նա բոլոր ժամանակը իր համար կաշխատի, (չհաշւած բնաւտուրքը): Ուրեմն շահը այն հանգամանքի հետեւանըն է, որ բանորը իր աշխատանքով վաստակում է տիրոջ համար իր ստացածից աւելի, Եթէ դարբինը ինքն է, թէ տէր և թէ բանորը, գործը բոլորովին չէ փոխւում, զանազանութիւնը նրա մէջ է միայն, որ թէ աշխատանքի վարձը և թէ շահը մի և նորն անձն է ստանում:

51.

Աշխատութեան օրամիջոց. Անհրաժեշտ եւ աւելորդ աշխատանքը միջոց, Այն բոլոր ժամերը, որ տանիքի միջոց, բանուորը օրակ մէջ աշխատանքի վրայ է գրնում, անւանում է նրա համար աշխատութեան օրա-

միջոց՝ Ալդ ժամանակից—այն ժամերի թիւը, որոնց ընթացքում չինուում են իրեր աշխատանքի վարձին հաւասար գնով—անւանուում է՝ աշխատութեան անհրաժեշտ միջոց, իսկ միւս մնացած ժամանակը (մինչեւ աշխատութեան օրամիջոցի ժամերը լրանալը) անւանուում է՝ աշխատութեան միջոց, Ի՞նչպէս պէտք է հաշւել շահը. Պարզ է, որ պէտք է անհրաժեշտ աշխատանքի ժամանակամիջոցում պատրաստած իրերի գումարը հանել ամբողջ աշխատանքի օրամիջոցում պատրաստած իրերի գումարից. Ուրեմն շահը այնքան մեծ է, որքան՝ 1) փոքր է անհրաժեշտ աշխատութեան միջոցը, կամ 2) որքան մեծ է աշխատանքի օրամիջոցը եւ կամ 3) մեծ է աւելորդ աշխատանքին միջոցը. Եթէ աշխատանքի արդինաբերութիւնը աճում է, նշանակում է՝ աւելի կարմ միջոցում կարելի է պատրաստել անքան իրեր, որոնց գինը հաւասար է աշխատանքի վարձին: Յակտնի բան է, որ ալդ դէպքում անհրաժեշտ աշխատութեան միջոցը պակասում է իսկ շահը աւելանում է: Եթէ աւելանում է աշխատանքի վարձը, նշանակում է աւելի դանդաղ են պատրաստում նրա գնին հաւասար բոլոր իրերը: Ալդ դէպքում անհրաժեշտ աշխատութեան ժամանակը աւելանում է, իսկ շահը պակասում է:

52.

Հահը իազմող մասերը, Մի որ և է արդիւնակ գործութիւնից ստացած բոլոր օդուտը միշտ մի մարդ չէ ստանում: Հատ անդամ նրանով շահուում են մի քանիսը միասին, Մի և նոր ժամանակ, շահը կարող է բաժանել

